



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

«ԱՆՆԻԱ ՇԻՐԱԿԱՅՈՒ» ԱՆՈՒԱՆ
Միջազգային յարաբերությունների համալսարան

«Բուրվառ»
մատենաշար

ԽԱԶԻԿ ՍԱՐԱՋԵԱՆ

ՀԱՅՈՑ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Երևան
2000

Խ. Սարաջեան

Հայոց դերը Թուրքիոյ մէջ: Անանիա
Շիրակացու անուան համալսարանի հրատ.,
2000, 48 էջ:

Գրքոյկում հրապարակուած են հեղինակի
անտիպ դասախօսութիւնները Հայոց հարցի և
Հայ դատի վերաբերեալ:

0505000000

Ս. _____
850(01): 2000թ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Խաչիկ Յովհաննէսի Սարաջեանը անցեալի այն գործիչներից է, որոնց ժառանգութիւնը մնում է պարբերական մամուլի ծալքերում, մինչդեռ իրենք արժանի են առաել ճանաչման ու գնահատանքի: Նա եղել է լրագրող, թարգմանիչ, հասարակական գործիչ, ծնունդ է 1846թ. սեպտեմբերի 6ին Մաքրիզիդում (Կոստանդնուպօլիս): *Այլոք, Խաչիսար* և այլ ծածկանուններով աշխատակցել է պարբերական մամուլին («Պօլտոյ «Բիզանդիոն», «Տաճար», Թիֆլիսի «Մշակ», Վառնայի «Իրատուն» ևն), խմբագրել է «Հայրենիք» լրագիրը: 1865ից զբաղուել է առևտրով, ղնարուել թուրքական մէջլիսի անդամ (Սալնոձորից), գրական փորձեր է կատարել, զբաղուել թարգմանութեամբ (Ֆրանսերէնից, պարսկերէնից, թուրքերէնից): Մեզ ծանօթ է մասնատրապէս Սաադիի «Գօլեսթանի» նրա թարգմանութիւնը: Որոշ ժամանակ ապրել է Բուդաբիայում, 1898ին հաստատուել Թուրքիոյ, զբաղուել գորգի առևտրով: Վախճանուել է 1927թ. օգոստոսի 27ին:

Ընթերցողին ներկայացուող «Երիտասարդ Թուրքիա» և «Հայոց դերը Թուրքիոյ մէջ» խորագրով դասախօսութիւնները, որ անտիպ են, միանգամայն արդիական են իրենց նիւթով, և ինչպէս պատշաճ է հրապարակային ելոյթին, մատչելի ձևով ներկայացնում են ԺԹ դարի վերջին քառորդի և քսաներորդի առաջին երկու տասնամեակների դրամատիկ իրադարձութիւնները, երբ ելուպական այս կամ այն պետութեան (մեծ մասամբ Գերմանիայի) հովանաւորութեամբ կամ թողտուքեամբ թուրքերը պարբերաբար կոտորում էին հպատակ քրիստոնէայ ժողովուրդներին, և չնայեաձ հայ ժողովրդի բազմաթիւ զաւակներ անգնահատելի ներդրում ունէին երկրի բաղաբական, տնտեսական ու մշակութային կեանքում, քրքական պետական մերթնան ամենից աւելի տմարդի ու դաժան եղաւ հէնց հայերի նկատմամբ:

Այժմ մեզ բաւական ժամանակ է բաժանում համիդեան ու երիտթուրքական խժոժութիւններից, և աշխարհի մի շարք երկրների խորհրդարաններ դատապարտել են ցեղասպանութիւնը, իրենց սթափ գնահա-

տականր ստուկ այդ դէպքերին: Բայց քաղաքակրթութիւնն ու ժամանակը շատ քիչ բան են փոխել Թուրքիայում, բնաւ չի փոխուել թուրքի հոգեբանութիւնը: Այլ կերպ հմարատը չէ հասկանալ այն լայնածաւալ պայքարը, որ մղում է այդ երկիրը բոլոր մայրցամաքներում՝ հերքելու համար Երիտասարդ թուրքերի յանցանքը: Կարծես այսօրուայ թուրք կառավարութեան մասին և գրել մէկ դար առաջ «Մուրճ» ամսագրի թղթակիցը. «Օսմանեան կառավարութեան բարի սովորութիւնն է խեղափոխելով եղծել ճշմարտութիւնը, եղծել ջանալ մինչև անգամ ապացուցուած իրողութիւնները»¹: Այս խօսքը ինչ-որ չափով վերաբերում է և կեղծիք կատարելու գործում Թուրքիային սատարող պետութիւններին:

Խ. Սարաջեանը «Երիտասարդ Թուրքիա» ակնարկում, որ գրել է 1903ին, մատչելի շարադրանքով բացայայտում է թուրքերի նկրտումներն ու րմբոնումները: 1876թ. Հերցեգովինան ապստամբեց, պահանջում էր ինքնավարութիւն: Թուրքական իշխանութիւնների փորձարկած միջոցները ապարդիւն մնացին, իսկ բազմափորձ նախարարներից ոմանք գտնում են ելքը՝ իսկական թրքական ելք. առաջարկում են «փոքրիկ իշխանութիւն մը տալ Հէրսէթի,- ի՞նչ կրնայ ըլլալ, շատ շատ քսասը (մսագործ) մը ևս պիտի աւելցնենք.- կ'ըստին, վասն զի սոքա Մօլտախոյ, Վալաքիոյ, Սերբիոյ և Մօնտենէկոօի իշխաններն իբրև մէկ մէկ մսավաճառներ կը նկատին»:

Երիտասարդ թուրքերի կուսակցութեան կազմաւորումը կապուած էր համիդեան իշխանութիւնների գործողութիւններից առաջացած դժգոհութիւնների հետ, որ գնալով աւելանում էին. «ասկից առաջ եկաւ այն կուսակցութեան մնանող ճղճիմ, անորոշ, անգոյն զանգուածը որ *Երիտասարդ Թուրքիա* անունը կուտայ իրեն», - գրում է Խ. Սարաջեանը: Նրա համոզմամբ դրանց «ամենամեծ, ամենաանդարմանելի սխալը» իրենց գլխատը կարգախօսն էր՝ «Թուրքիան թուրքերուն»: Կեղծաւորաբար կապկելով Երտալային՝ Երիտթուրքերն իրենց դրօշին գրեցին հաւասարութեան ու եղբայրութեան կոչեր, բայց դա միայն վարագոյր, շղարշ էր: Նրանք իրենց նախորդող իշխանութիւններից դժգոհ էին ճիշտ հակառակ դիրքերից: «Ֆաթիհ-Սուլթան-Մեհմէդ Բ. երբ Պօլսի գրաւեց, «ինչո՞ր քրիստոնեաները բռնի չ'իլաւանցուց և կամ թրէ չ'անցուց»,- կը մորմոքէին, դառնապէս ռսելով, Երիտասարդ թուրքերը», - նկատում է Խ. Սարաջեանը: Իրենց քաղաքակիրթ համարող այս կուսակցականները դժգոհ էին Արիւնտ սուլթանից, որ 300.000 հայ էր կոտորել ու չէր բնաջնջել ամբողջ ազգը: Ուրեմն նորերի ու հնրի տարբերութիւնը չարութեան արմատականութեան, չափերի մէջ էր: Նորերն անհամեմատ դաժան ու անհանդուրժող էին, և ըստ էութեան

1 Մէլյան, Տունկա-Հայաստանի ազգաբնակչութիւնները. «Մուրճ», 1895, էջ 498:

թրքական «կուսակցութիւնները» իրարից տարբերում էին դրանով, իրականում բոլորը միևնոյն կուսակցութեանն են պատկանում, թուրք են: Այսպէս, սող էջերի մէջ Խ. Սարաջեանը բացայայտում է այդ երևոյթի անմարդկային էութիւնը:

Սովորաբար թուրքերը վիրաւորական են համարում «Լիկտոր Հիւզոյի ասոյթը»՝ «Այստեղով թուրքն է անցել»: Մակայն երիտթուրք ոչ անյայտ գործիչ Ջիա Գեօք-Ալիը Մեծ եղևոնի նախօրէին գայրոյթով ու հպարտութեամբ է յիշել ֆրանսիացի մեծ գրողի հանրայայտ խօսքը: «Ես պարտաւոր եմ ոչնչացնել ամեն բան, չթողնելով քարը քարի վրայ, ո՛չ կանգուն ծառ և ո՛չ իսկ կանաչ տերև նրա վրայ: Ես պարտաւոր եմ այնպիսի աւերակներ թողնել ինձնից յետոյ, որ իւրօքանչիւր տեսնող իրաւունք ունենայ ասելու՝ «Այստեղով թուրք է անցել»: Անկողը է ասել, որ եթէ մէկը, առաւել ևս պետական մարմին, պետութիւն չի դատապարտում այս վարուելակերպը՝ կամայ թէ ակամայ հաւասարում է Գեօք-Ալիին: Իսկ վերջինս տուեալ դէպքում իր կուսակցութեան խօսափողն էր:

Թերևս այսօրուայ ընթերցողի համար աւելի շատ մտորելու առիթ է պարունակում Խ. Սարաջեանի երկրորդ՝ «Հայոց դերը Թուրքիոյ մէջ», դասախօսութիւնը, որ դատելով ըսաւ որոշ ակնարկութիւնների, կարդացուել է 1918-1919 թուականներին, երբ Հայաստանի վերածնունդը տեսանելի էր դառնում, իսկ առջևում Սևրի դաշնագրի հեռանկարն էր: Հեղինակն այս գործը համարում է «ատաղճ մը... զոր կարելի է ընդարձակել»: Հետաքրքիր է, որ 1943թ. Երևանի պետական համալսարանում կարդացած «Հայոց դերը Օսմանեան կայսրութեան մէջ» իր գեկուցումը Հր.Աճառեանը համարում էր «նախնական ծրագիր՝ յիշուալ թեմայով գրելիք մենագրութեան համար»:

Իսկապէս, Խ.Սարաջեանի և Հր.Աճառեանի այս ելոյթները հարուստ նիւթի հապճեւոյ թուարկումով են բաւարարուել, առաջ քաշելով դրոյթներ, որոնք ծաւալուելու մեծ հնարատրութիւն են պարունակում, ինչպէս դարձեալ Հր. Աճառեանն է ասում, «սա մի թուցիկ ակնարկ է, այո՛, որի իւրաքանչիւր հատուածը կարող է մի ընդարձակ մենագրութեան նիւթ դառնալ, եթէ մէկն ուզենայ մանրամասն ուսումնասիրել այն»⁴:

Ինչպէս սկսանելի էր, այս երկու դասախօսութիւնների միջև շատ նմանութիւններ կան: Երկուսն էլ, հասկանալի է, անդրադառնալու էին խնդրոյ ստարկայ կարևորագոյն երևոյթներին և անդրադարձել են: Ընդհանուր աւելիները կարելի է բացատրել և շփման կապերով, և՛

2 Բագդաս Գեմբարսկի, Նամակներ աշխարհին, կազմեց Հ. Կարծիկեան, Երևան, 1990, էջ 125:
3 Տե՛ս «Ռանբեր Երևանի համալսարանի», 1967, հ. 1, էջ 157:
4 Անդ, էջ 162-163:

սկզբնաղբիւրի ընդհանրութեամբ: Հեղինակները, օրինակ, շեշտում են, որ հաշտապահութեան մէջ այսպէս կոչուած իտալական կրկնատմարը թուրքիայում առաջինը հայերն են կիրառել: Բայց Աճառեանը մաս աւելացնում է. «Մրա հիմնադիրներն էլ հայերն են եղել՝ ջողայեցի հայ վաճառականները»: Ընթերցողին փոքր-ինչ համեմատելու առիթ տալու համար ևս մի քաղում կատարենք Հր.Աճառեանից. «1860 թուականին Ֆուադ և Ալի փաշաները մտածել էին տաճկական գրեթէ թողնել և պաշտօնական զիր ընդունել հայերէնը: Մեծ եպարքոս Ռաշիդ-փաշան սովորեց հայ զիրը, որպէսզի տարածի թուրքերի մէջ: Ասում են թէ Օսմանեան երեսփոխանական ժողովումն էլ նոյնը ընդունուած էր, բայց ազգային փառասիրութիւնը կամ ժողովի շուտ փակումը չթողեցին կատարել այն»⁵: Պետք է նկատել, որ Խ.Սարաջեանի և Հր. Աճառեանի դասախօսութիւնները դրականօրէն լրացնում են միմեանց:

«Հայոց դերը թուրքիոյ մէջ» խորագրուած սոյն գրքոյկը արժարժում է հայոց պատմութեան կենսական շատ խնդիրներ, ցոյց է տալիս հեղինակի յատուկ տեսլականը նիւթին և արժանի է ընթերցողի բարեացակամ ուշադրութեան: Գրքոյկը հրատարակուած է Խաչիկ Սարաջեանի ընտանեկան արխիւում պահուող ձեռագրերի հիման վրայ, որոնցից մէկը («Հայոց դերը թուրքիոյ մէջ») հեղինակի ինքնագիրն է: Ինչ-ինչ նկատառումներով հեղինակը որոշ կրճատումներ է կատարել, որոնք վերականգնել ենք, վերցնելով ուղիղ փակագծերի մէջ:

Արշակ ՄԱԴՈՅԵԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԶԻԱ

1861ին Սուլթան-Ազիզ, յայտարարելով եղբորը, Սուլթան-Մեհմադի, գահը բարձրացել էր:

Եւրոպայէ, գլխաւորապէս Անգլիայի և Ֆրանսայէ թուրքիա քափուած ոսկիի հեղեղներուն, փոխառութեանց շնորհիւ, Տաճկաստան մեծ ոգևորութեան, ցփութեան և շռայլութեան մէջ ինկաւ:

1862ին Ամերիկայի հիսսիսայնոց և հարաւայնոց պատերազմի հետևանօք թուրքիոյ վաճառականութիւնը փայլուն վիճակ մը ունէր ամեն ազգի համար ընդհանրապէս և Հայոց համար մասնաւորապէս:

Համարեա՛ այս թուականէն կ'սկսի Հայոց ի թուրքիա ներածական վաճառականութեամբ զբաղուելու արշալոյսը:

Կարմիր ոսկիները պետութեան և մանաւանդ Սուլթան-Ազիզի աչքերը շագուցել էին, երկիրն հետզհետէ փոխառութեան կը դիմէր, պետական զանազան հատոյթներ երաշխիք ընծայելով:

Բայց այդ փոխառութեանց տոկոսիքն էլ վճարելու համար դարձեալ փոխառութեան կը դիմէր, այնպէս զի, միջոց մը, պետութեան պարտքը հասաւ մինչև 300.000.000 ոսկիի և կամ այսպէս ըսենք 4.000 միլիոն րուբլի:

Այս ահագին գումարէն մէկ քանի պալատներ և այլ շինութիւններ շինուեցան, բանակը քիչ շատ կազմակերպուեցաւ, ութը-տասը զրահաւոր շինուեցան, մնացորդ մեծագումար ոսկիներն անոր ասոր կոկորդին մէջ հալեցան:

Երկիրն հեազհետէ քայքայման ուղին բռնած էր նիւթապէս: Պարբերաբար ապստամբական խորտումներ գլոխ կը բարձրացնէին ի Սօնաէնէկո, ի Կրէտ և յԱտրիք (Քիւրսիստան):

Այս չարեաց իբրև «զեկոյց» «Մուխրիք» անունով թերթ մը հրատարակեց Ջիա-Բէյ, երկրին արդի և ապագայ վիճակը մատնանիշելով, և կերպով մը *Երիտասարդ թուրքիոյ* կազմութեան հիմները դնելով:

Ջիա-Բէյ թուրք անուանի բանաստեղծներէն մին էր: Իր մէկ տաղերգութեան մէջ ըսած էր.

*- Մարդկային ազգը յարգանք ունի
Յաւէ՛տ անոր անունին,
Որ զինք գոհէ, անձը դնէ*

⁵ Անդ, էջ 159:

⁶ Անդ, էջ 162:

*Յօզմութիւն իր նմանին:
Հիմնական բշտառներուն ով որ դատը կը լսէ
Շտղաստիւն փարատնին հոգոյն որորմիս հանէ:*

Այս կարգի բացատրութիւններ և նոյն իսկ մտածութիւններ դիր չէին զար բռնապետութեամբ սնամ պետութեան ականջին:

1865ին Ձիա-Բէյ Լօնտօն փախաւ, և անդամօր սկսաւ հրատարակել իր «Մուխրիք»ը: Այնտեղ ատելի ազատ և գրաքննութենէ զերծ իր փափաքած հողը գանկով, ինչ որ Պօլսոյ մէջ ծածկօրէն յայտնած էր, հոն ատելի ազատ և մերկապարանոց սկսաւ նշանակել և պետութեան ու պալատին ամբապէս քօղարկեալ վիճակին վարագոյրը պատուել և չարաչար հարուածել:

Ձիա-փաշայի այս հարուածներէն ոչ որ անբաժին չի մնաց՝ Արդիւ-Ազիզէն սկսեալ եպարքոս Ալի-փաշա, նահանգապետները, կառավարիչները, փոխ-կառավարիչները, դատարոնները ևն ևն:

Ամենակծու հարուածները կը ճաշակէր Ալի-փաշա, իբրև համայն չարեաց պատասխանատու:

Ամեն շարքու Լօնտօնը նորք թողթերու վրայ տպուած թերթերը կանոնաւոր կերպով Պօլիս կը հասնէին և ամենամեծ հետաքրքրութեամբ կը կարդացուէին ձեռքէ ձեռք գաղտնի խլուկով:

Ձիա-Բէյ շատ բան գրեց, մեծ մասամբ յարձակումներ էին հայեցանքով համեմեալ: Վերքը կը բանար, բայց դարման ցոյց չէր տար:

Մինչ այս, մինչ այն, Ձիա-Բէյ յոգնեցաւ գրելով, ներում շնորհուցաւ, բերանը շաքարի եղև մը դրին, կաշառեցին, քիչ մը դրամ և պաշտօն մը տուին, դարձաւ Պօլիս եկաւ և Ամասիոյ (Փոքր Ասիա) կառավարիչ կարգուեցաւ:

Այն անձը որ օտար և ազատ հողի վրայ մեծ-մեծ ջարդեր էր, գործի գլուխ, պաշտօնի անցած ատեն մեծ գործ մը չի տեսաւ նշանակութեան արժանի, այլ Ամասիա որ համեմատաբար հանդարտ միջավայր է, երկար ատեն իբր կառավարիչ մնաց և գիտնալու համար իրեն նկատմամբ հասարակաց կարծիքը, գիշերները ծպտեալ, քաղաքին մէջ, մանաւանդ քրիստոնէից (հայ և յոյն) թաղերը կը պտտէր *ուղտի վրայ հեծած*, որպէսզի թէ տանը ներքին մասը դիտէր պատուհաններէն և թէ ոտքին շշուկը չի լսուր անոնցմէ:

Վերջապէս ասիականութիւնը հրաժարած չէր իրմէ:

Յետոյ իր բազմաթիւ... ծառայութեանց ի վարձ, վեզիրութեան աստիճանին բարձրանալով Ադամայի կոսակալ եղաւ, անդ ևս... ծառայութիւններ մատուցանելով, կեանքէ հրաժարեցաւ:

Մենք ի հարկէ նպատակ չունինք Ձիա-փաշայի կենսա-

գրութիւնը գրելու, որ մեր խնդրէն դուրս է. բայց այս գլխաւոր գիծերը առաջ բերելնիս անօգուտ չէ, որովհետև ի վերջոյ առիթ պիտի ներկայանայ անդրադառնալու:

* * *

1865ին, փոխառութիւնները կը շարունակուէին մեծ թափով, երկրին գլխին ահագին պարաքեր կը դիպուէին:

Մուլթան-Ազիզ կերուխում սիրող, ուրախ-գուարք թագաւոր էր: Բայց երկիրը պարտքի կ'ենթարկուի եղեր, շատ հոգ չէր ընէր: Ամեն բան Ալի-փաշայի յանձնուած էր, երկրին Մուլթանը եպարքոսն էր գրեթէ:

Մուլթան-Ազիզ Պարիզէ, Եգիպտոսէ նոր դարձած էր, թողունք Պարիզը, բայց նոյն իսկ Եգիպտոսի վիճակէն շատ շլացած դարձաւ, վասն զի զարմամօք դիտած էր երկրին բարեկարգութիւնը, հարստութիւնը և ևորոպական քաղքի մը պահանջած կանոնաւորութիւնը, մի նշդէն ինքը Եգիպտոսի գերիշխան վեհապետն ըլլալով հանդերձ իր երկիրը այդ վիճակէն փարսախս-փարսախս հեռի կը գանուր:

Եգիպտոսի Խրդիվիճ, Իսմայիլ-փաշայի եղբայրը՝ Մըստաֆա-Ֆազըր-փաշա, որ Ֆրանսա կրթուած լուսամիտ և հայրենասէր անձ մ'էր, ֆրանսերէն լեզուով տետրակ մը հրատարակեց, որ այսպէս կ'սկսէր. «Թագաւորներու պալատէն ներս, ամենևն դժուար մտնող բանը ճշմարտութիւնն է»:

Ֆազըր-փաշա երկրին վիճակը բաւական մեկին և յստակ կերպով և կրթեալ անձի մը բերնին վայելուչ լեզուով բացատրել յետոյ, պատասխանատու վարչութեան մը պէտքը կը շեշտէր, որով Սահմանադրութեան և կամ այսպէս ըսենք, Երիտասարդ Թուրքիոյ երազած կազմակերպութեան հիմունքը կը գետնէր: Այդօրինակ հրատարակութիւն մը հարկաւ հաճելի սպասուածութիւն չ'պիտի ընէր, իսկոյն հաւաքեցին և անհետ որին:

Նոյն իսկ մեծ շրջանակներու մէջ կարծողներ և ետատացողներ եղան, թէ այդ գրքոյկը ծածուկ նպատակներ կը թագուցանէր, որպէս թէ Եգիպտոսը և Թուրքիան միմեանց կցելով, միացեալ երկրին վեհապետը կարգել զինքն ի նպաստ հուշակաւոր Ալեքսէր-Ալի-փաշայի տան:

Ֆազըր-փաշան նկատեց որ այդ կարգի բարենորոգումներ, բարոքումներ մտածելու, առաջարկելու և ի յոյս ընծայելու ատենը չէր, և մանաւանդ իրեն նկատմամբ զանազան տեղի կամ անտեղի կասկածներ կ'ըլլային, լռեց և մէկ մ'ալ խօսքը չի լսուցաւ:

Ֆրանսացոց կայսրը Նապոլէոն Գ, համոզուած ըլլալով որ երբ երկիրը հանդարտ վիճակ մը ունենար, ժողովուրդն իսկոյն ներքին խնդիր մը կը յարուցանէր, ուստի ժողովուրդին ուշը այլուր զբաղեցնելու համար, պատերազմի հնարքներ կը խորհէր: Այսպէս եղաւ ԽՍրիմի

պատերազմը, Մեքսիքայի պատերազմը, Չինաստանի և Գօչինչինի պատերազմները, Իտալիոյ համար մղածը, և վերջին Մեղանի պատերազմը որ աղէտալի եղաւ ընդհանրապէս Ֆրանսայի, և մասնատրապէս իր անձին համար, որ գերի ինկաւ:

1870-71ին Թուրքիա մեծ անձկութեամբ դիտեց այս պատերազմը:

Ֆրանսա որ մինչև այն ատեն մեծ բարեկամը ճանչցուած էր Թուրքիոյ, չարաչար կը տապալէր, և մինչև իսկ Նապոլեոնի տապալման զիշերը Սուլթան-Ազիզ խստիւ յանդիմանած էր եպարքոս Ալի-փաշան, սրտմտկով թէ ինչո՞ւ Ալի-փաշա աշխատած և համոզած էր Օսմանի ահեղ թուան Ֆրանսայի ոտըը երթալու:

Այս միջոցներուն, Թուրքիոյ ներքին բարեկարգութիւն և ուրիշ ասոր նմանող բաներ ծալլուած մէկ կողմ նետուած էին, վասն զի դուրսը ուրիշ վտանգներ կը նշմարուէին և թուրքերուն ամենէն հայրենասէրներն իսկ խեցիին մէջ քաշուած իբրև կրեայ դէս ու դէն ուշադիր կը դիտէին:

* * *

Վարսունական թուականներուն, Դանուբի նաւարկութեան մասին միջազգային վեճ մը ծագեր էր: Վեց մեծ պետութիւններ յանձնաժողով մը կազմեցին այդ խնդրոյն քննութեան և կարգադրութեան համար:

Օսմանեան կառավարութեան կողմէ ևս զմաց Միտհաթ-փաշա և իբրև դիւանագիտական տեսուչ (Փօլիթիքա մեմորը) Օտեան Գրիգոր Էֆենտին հետը տանելով:

Այդ թուականէն Թուրքիոյ երկու մեծ պետական մարդիկ իրարու երկկամուսըը քննած զիրար ուսումնասիրած և ճանչցած էին:

Օսմանեան կայսրութեան կարևորագոյն նահանգներէն մին էր այն ատեններ Ռուսնուզի վիլայէթը:

Ռուսնուզի վիլայէթի ըսելով պէտք էր հասկնալ այժմու ամբողջ Բուլկարիոյ իշխանապետութիւնը, Շարքի-Բումլի (Ադրիանուպօլիսի նահանգը) դուրս թլլալով:

Ռուսնուզի նահանգապետ կարգուեցաւ Միտհաթ-փաշա: Այս անձը թուրքաց մէջ գերագանցապէս զաղափարի, աստիճանաբար յեղաշրջման և միանգամայն կտրուկ, գործի մարդ էր:

Երկար ատեն նահանգապետի պաշտօն վարեց և միջոց ընձեռեց բուլկարներուն որ քիչ մը շունչ առնէին:

Պետական տուրքերու գանձումը կանոնաւորեց, դատարանները բարորդեց, երկրագործութեան զարկ տուաւ, ճամբաներու շինութեան աշխատեցաւ և բնակչութեան մէջ հաւասարութիւն մտածանելու հոգ տարաւ, պայմաններ, որոցմով երկիր մը կարող է

զարգացման ճամբու մէջ մանիլ, մէկ խօսքով Բուլկարիոյ արդի համեմատաբար յուսալի ծաղկաւաւ վիճակը իր մեծ նահանգապետին աշխատութեան կը պարտի մասամբ, և՛ թէ ըսենք, ճշմարտութիւնը խոստովանած կը լինինք:

Վերը ըսինք թէ, բնակչութեան մէջ հաւասարութիւն մտածանելու աշխատեցաւ Միտհաթ-փաշա:

Արասիկ պզտիկ օրինակ մը:

Ինչպէս Անադօլիի, նոյնպէս և Բումլիի իսլամները անհատաբար առնելով մէկ-մէկ փոքրիկ բունաւորներ եղած են: 1846ին բուլկարաց ասպտամբական խորտումը որ Սիլեստրիի մէջ երեք օր մարդկային արեան հեղեղի պէս հոսելուն տեղի տուաւ, արդէն իսլամաց մէջ շատ թունդ տալաւորութիւն գոյացուցած էր, և շատ անարգ մարմին մը կը նկատէին բուլկարները և իբր այն հայեոյել, գանակոժել, չարչարել շատ սովորական բան մ'էր:

Բամագանի օր մը զիւղացի հասակաւոր բուլկար մը, առանց յուշ ատելու որ այդպիսի ատեն մը իսլամաց շուկային մէջ ներկի չէր, իր ծխափայտը քաշելով և մոխի ամպեր գոյացնելով կ'երթար իր գործին: Իսկոյն միւսիւմանները խեղճ զիւղացոյն վրայ կը յարձակին, կը հայեոյեն, կը ծեծեն և արհիւրայ վիճակի կը հասցնեն: Միտհաթ-փաշա որ միշտ ման գալու, ժողովուրդին ցաւերը մօտէն զննելու հետամուտ էր, տեղնուաւոր վրայ կը հասնի, գործը կը հասկնայ և հրաման կ'ընէ բուլկարին որ *չորր* լեցնէ: Գիւղացին խեղճ էր որ նորէն ծխը, բայց ոյժով ծխափայտը լեցնել կուտայ, և շուկային մեծ Էֆենտին որ բուլկարին այս վիճակին հասնելուն շարժաոժիքը եղած էր, հրաման կ'ընէ, զիւղացին Էֆենտին շալակը կը հեծցնեն. չորրը վառել տալով և ծոխը աչ և ահեակ սփռելով շուկային մէկ ծայրէն միւսը պտուցնել կուտայ, ըսելով որ իսլամը ծոմ կը բռնէ իր օրէնքին համեմատ և միայն իր անձին համար, ուրիշ ազգեր պարտական չեն ծոմ պահել քանի որ իրենց օրէնքը չի տրամադրեր:

Այսպիսի դէպքեր այնքան շատ կը պատահէին որ հաւատացեալներն սկսան *կեակոր Մորտաղ* անուանել Միտհաթը:

Միտհաթ-փաշա այն համոզման եկած էր որ երկիր մը յեղաշրջելու համար, առաջին պայմանն էր հաւասարութիւն ներմուծել. զի հաւասարութեան շնորհիւ է որ անձնիւր որ մեծ ընտանիքին զինքը մէկ անդամը կը նկատու և ամբողջութեան մէկ մասնիկը, զի ուր որ հաւասարութիւն չի կայ, համերաշխութիւնն ալ գոյութիւն չունենար, մին և միւսն հանապազ զիրար հալածել էն դադրի:

Երիտասարդ Թուրքերն յանձին Միտհաթ-փաշայի մեծ զօրավիզ մը կը գտնէին, թէպէտ տարբերելով տեսակէտի մասին:

Մինչ այս մինչ այն 1876ին երբ Հերձկովինի ասպտամբութիւնը ծագեցաւ, եպարքոսութեան կնիքը Միտհաթ-փաշայի մօտ էր, մեծ եպարքոս եղած էր:

Ապստամբությունն հետզհետե կը ծառայիր: Քննիչներ զրկուեցան ըստ քրքական վաղեմի սովորութեան, Սևրվեր-փաշա և հայազգի Կոստանդ Էֆենտի (յետոյ փաշա) ձեռնունայն ետ դարձան, ապստամբութիւնն օր օրի մեծ ծառայներ կ'ստանար, Հերձեքովիներն Բօսնիա անցել էր: Հին նախարարներ, մագերհին, մօրուքին պատերազմի և գործի մէջ ճերմկցնող անձինք ինչպէս նախկին սպարապետ Բիգա-փաշա (ճիհան սերասերի) և նախկին մեծ էպարքոս Մահմուտ, Հևտիմ փաշաները կ'առաջարկէին փոքրիկ իշխանապետութիւն մը տալ Հերսէքի,- ի՞նչ կրնայ ըլլալ, շատ շատ քսասար (մսագործ) մը ևս պիտի աւելցնենք. - կ'ըսէին, վասն զի սոքա Մօլտավիոյ, Վալաքիոյ, Մերքիոյ և Մօնտենէկրօի իշխաններն իբրև մէկ մէկ մսավաճառներ կը նկատէին՝ Ռումանիոյ իշխանները Պօլտոյ Ֆենէրի կողմէ ընտրուելուն համար:

Միտհաթ-փաշա ղեմ կը կենար անոնց այս առաջարկին, և զանոնք ռուսօֆիլ կ'անուանէր, իբր թէ ռուսի դատը կը պաշտպանէին. և կծու ակնարկութիւններ տեղի կունենային:

Միս կողմէ, ապստամբութիւնն հետզհետե կը ծառայէր, Մերքիա ևս գործին մէջ մտաւ, դժբախտ Ջերմայէֆի աստղը չի փայլեցաւ: Մերքիոյ ներքին և արտաքին ոյժերուն եռապատիկը զօրք հանեց Բ. դուրը կանոնատըր և անկանոն զօրք, բաշի-բօզուքները, թուով 120.000ի մօտ, միանալով 150.000 կանոնատըր զօրքին, մարախի պէս ինկան Մերքիոյ փոքրիկ իշխանապետութեան լանջին վրայ: Չայչար ինկաւ և երկու օրէն Բէլկրասա պիտի մտնէին թուրքերը, Ռուսաց դեսպան, զօրապետ Իկնաքիեֆ զինադուլ առաջարկեց, այլապէս մնկնելու սպառնալեօք:

* * *

Ի հարկէ մեր նպատակէն դուրս է վերջին ռուս-թուրք պատերազմին պատմութիւնը գրել, բայց սոյն մանրամասնութեանց մէջ մտնելնուս զվստար շարժառիթն այս է որ այդ թուականներուն երկրին մէջ տիրող երկու մեծ կուսակցութեան չուկետը, մեկնակէտը պարզենք:

Այդ երկու մեծ զանգուածներուն մին կը վերաբերէր հին, վուր-ճառու, աստիճանարար երկրին զարգացման հետամտող կուսակցութեան, որ մեծամասնութիւն կը կազմէր, և երկրին այս կամ այն ծայրը բացուող ծակը փակելու և կարկտելու մէջ կը գտնէր երկրին շահը, իսկ միս կուսակցութիւնը, որ նոր կազմուէր էր, և որուն անդամաց շատերը երկրին ոչ թէ թագաւորող *ռէժիմէն*, այլ թագաւորին *անձէն* ձանձրացեր էին, և ակամայ, հոսանքէն մղուելով յարած էին Միտհաթի կուսակցութեան:

Միտհաթ չէր յօժարիր, երկրին մաս առ մաս բաժանման և բաժան-բաժան յոշոտման, այլ արդէն եղածներն իբրև վերջացած գործ նկատելով կը խորհէր արդի վիճակը պահպանել, տեղական պիտոյից և

հանգամանաց ներած չափով սահմանադրական հաւասարութիւն տալ և համազգ ու տարազգ հայրենիքի բնդհանուր շահերուն առջև մէկ մարմին նկատելով փրկութեան նաւը պատրաստել:

Այս վախճանին հասնելու համար, գոր շատեր շատ կանուխ սեպեցին, Միտհաթ-փաշա Օտուան Գրիգոր Էֆենտիի հետ Օսմանեան սահմանադրութիւնը լսմբագրեց, և երբ 1877ին Պօլիս, Գասրմ-փաշա արքունի նաւարանը վեց տէրութեանց լիազօրները դեսպանախորհուրդի նստելու էին, տէրութեանց առաջարկած պրօտօքօլը քննելու համար, Միտհաթ-փաշա ուրի կենալով ճառ մը արտասանեց. - «Թուրքիոյ նուիրական ժամը հանդիսապէս կը հնչէ, տիարք»- ըսելով և սկսաւ Մահմանադրութեան ֆրանսերէն թարգմանութիւնը կարդալ, երբ թնդանօթներն անոր զայուսար կ'ողջունէին»:

Լիազօրներն յապուշ կրթեալ իրար կը դիտէին Միտհաթին սոյն անակնկալ դարձածքին առթիւ: Միտհաթ կը գոչէր որոտածայն. «Էւր մէկ գաւառի ազատութիւնը կը պահանջէք, մենք ամեն գաւառի, Թուրքիոյ ամեն մասին համար ազատութիւն պիտի տանք, իսլամը մզկիթին մէջ, քրիստոնէայն եկեղեցւոյն մէջ, իրևայն սինակօզին մէջ միայն իրարմէ պիտի տարբերին: Իսկ հանրութեան սեղանին առջև ամենքն ալ հաւասար են, միևնոյն իրաւունքներով և միևնոյն պարտականութեամբ»:

Այսպիսի շացնող խօսքերով ուզեց մեծ պատերազմին առայն առնել, բայց Թուրքիոյ խօսքերուն անկեղծութեան չուզեցին հաւատ ընծայել, որոց շատ հեղ փորձերը անսած էին դժբախտարար, այս անգամ ևս նախորդաց շարունակութիւնը կարծուեցաւ:

Ռուս-թուրք պատերազմն առայ իկաւ, Մև-լեռը արդէն կռուի մէջ էր, բուկար ապստամբութիւնն ալ եկաւ բարդուեցաւ, և Բաթաքի և Օթուրքի թրքաց բարբարոսութիւնները պատճառ դարձան որ Երուպա երևս դարձնէր թուրքերէն:

Սոյն պատերազմն ի՞նչ վախճան ունեցաւ, ամեն որ կրնայ յիշել, յիշենք անցողակի որ թուրքը 150.000 զինուոր կորուստ, 42.000.000 ոսկի տուգանքի ենթարկուեցաւ:

Հերսէք-Բօսնիան (շուրջ մէկ ու կէս միլիօն բնակչօք) Ասարիան կուլ ստաւ, Կարսը, Արդահանը, Բաթումը Ռուսիոյ անցան, Բուկարիա իշխանապետութիւն եղաւ, Ռումանիա, Մերպիա անկախ թագաւորութիւն եղան, Մօնտենէկրօն ազատ իշխան եղաւ, Կիպրոսը Անգղիան ճաշակեց, ընթրիքէն փոքրիկ մաս մ'ալ պարսիկին ինկաւ, Խօթուրը ստացաւ, հանդարտ կենալու իբր արիստոր:

Եզիպտոսի վրայ Անգղիոյ բարկութիւնը և Կրէտէի անկախութիւնը վերջին դէպքերն են:

* * *

Այս դէպքերն այժմ պատմութեան կը վերաբերին, և պատմութիւնը իրաւունք պիտի յասկացնէ Թուրքիոյ հին կուսակցութեան,

որք երկրին վիճակին առևի մօտն տեղեակ ըլլալով միշտ պահպանողական ընթացքի մը հետևած էին: Երկրին յեղաշրջումը մէկ օրէն միւսը ի գլուխ ելնելու գործ մը չէր, այլ զարգացեալ ազգերու վիճակն ու անցեալը ի նկատ առնելով և քայլ առ քայլ հետևելով, կրթութեան գործին, մանաւանդ առ տակաւ ժողովուրդը պատրաստելու յամառ աշխատութեամբ պարապելու էին:

Ժողովուրդին պետք փոխտելով մէկ օրէն միւսը ժողովուրդը զգալի փոփոխութիւն չէր կրնար ունենալ:

Ասիական բարբարոսութեամբ սնած, մեծցած և մինչև ոսկորներուն ծուծը և երակներուն մէջ բռնութեան միջոցով բոյն դրած ժողովուրդ մը հարկաւ չէր ներքեր որ մինչև այն թուական անարգութեամբ, գեանարարը *Կեակալոր* զար իր թովր բազմը, իրեն հետ հաւասար իրաւունք և ազատութիւն վայելէր:

Միտհաթի սկզբունքները որքան էլ գեղեցիկ թուէին ազատագրութեան սիրահարներուն, բայց առողջ սաղմ չունէին, որովհետև երկրին վիճակը, տեղական հանգամանքը, իսլամին սովորոյթն ու աւանդութիւնները, քրիստոնէից ձգտումները խորապէս ուսումնասիրուած և ըստ այնմ պատշաճուած չէին, այլ կարծեց թէ չորս պատի մէջ նստած, կանաչ սեղանի վրայ Ֆրանսական սահմանադրութենէն քաղուածներ ընելով, պիտի կարենար պատշաճեցնել իր երկրին, առանց ի քնին առնելու որ Ֆրանսա ոչ միայն անհամեմատ, անբաղդատելի զարգացում ունէր թուրքաց հետ բաղդատելով, ոչ միայն Ֆրանսա մեծ յեղափոխութիւններու քուրայէն անցել էր այդ վիճակին հասնելու համար, այլ որ զխաւորն և, Ֆրանսա 38/40 միլիօն ժողովուրդ, ամենքն ալ մէկ ազգ, մէկ ցեղ կը կազմէր, և Թուրքիոյ պէս բազմազան, զարմանազան և շատ անզամ իրարու ներքակ ժողովուրդներ չէր պարունակեր, հետևաբար Միտհաթի սահմանադրութիւնն ալ պարզապէս մտացածին երևակայութեան արդիւնք էր, և որովհետև պատճառը երևակայութիւնն էր, արդիւնքն ալ երևակայական եղաւ:

Ամեն պատճառ իր արդիւնքն ունի:

* * *

Բայց ընդունելով հանդերձ պահ մը որ ամեն արդիւնք փորձերէ կը ծնին, Միտհաթի ըրածն ալ փորձ մ'էր, որ իր սաղմնային վիճակէն իրականութեան աշխարհը մտնելով քիչ-քիչ, փոքր առ փոքր, առ տակաւ-տակաւ ժողովուրդը պատրաստուէր այդ վիճակին և օրին մէկը արդիւնատր ըլլար, պայմանաւ որ իրեն յաջորդները գործին զլուխն անցնէին, զգուշութեամբ, իմաստութեամբ, շրջափայտութեամբ և միշտ տեղական հանգամանքներն ի նկատ առնելով՝ մեծ ազատագրութիւնը պատրաստէին:

Արդ քննենք թէ այսպէս ըրի՞նք. պատասխանը դժբախտաբար բացասական է:

Սուլթան-Ազիզ դաւադրութեամբ գահէն վար առնուած, սպաննուած էր: Իրեն յաջորդեց գերագանգապէս ֆրանսացեալ բարի, բայց միևնոյն ատեն փափկասուն և վեհերոտ Սուլթան-Մուրադ, Սուլթան-Մեծիտի անդրամիկ որդին:

Այն առաւոյն երբ սպարապետ Հիւսէյն-Ավնի-Փաշան նստակով կը տանէր ի գահ բազմեցնել Սուլթան-Մուրադը, սարսափի ենթարկուած էր մեծ բանտարկեալը, վախելով որ արսոր կը դրկուէր:

Հիւսէյն-Ավնի զՍուլթան-Մուրադ հանդարտեցնելու մտօք. հանեց վեց հարուածներ և տուաւ Սուլթանին.՝ եթէ այդպիսի կասկած ունիս, հիմա, այս թուական զարկ սպաննէ՛ զիս. ըսելով փոքր-ինչ հանդարտեցուց, բայց այս ղեկըն շատ վախցեր էր, և գահը բարձրանալէ ետքն ալ մնաց այդ երկիւղին արդիւնքը վրան և երեք ամիս յետոյ ղենպալտի վճռով արձակուեցաւ գահէն:

Իրեն յաջորդեց երբայրը Սուլթան-Համիդ, որ խոստացել էր Սահմանադրութիւնը պահել պաշտպանել: Միտհաթ-Փաշա ճարահատ, հաւանած էր Համիդի յաջորդելուն:

Ասկից կրնայ հասկցուիլ Միտհաթի ազդեցութիւնը:

Համիդ ի գահ բարձրանալէ յետոյ Օսմանեան սահմանադրութիւնը ծալեց դարակը դրաւ, անոր մէջ իբրև բովանդակ իսլամաց խալիֆա, իր իրաւանց դէմ ռունձգութիւններ նշարելով, և իբր այն, երկրին շահուցը վնասակար դատելով:

Միտհաթ ինկաւ, Այդընի կուսակալ կարգուեցաւ, քիչ մը ատեն անցնելէ յետոյ, Համիդ Պօլիս բերել տուաւ, պետական դաւադրութիւնը քննող դատարանի ենթարկեց և նախագահ Սուրուրի էֆենտիի միջոցաւ դատաւարութիւն կրկնով եւեմն արսորուեցաւ, որուն վախճանն յայտնի է արդէն:

Միս իբրև դաւադիր ամբաստանեալ սպարապետն ու ծովային նախարարն Միտհաթ-Փաշայի սպարանքին մէջ գիշեր մը ժողովի ատեն Չէրքէս Հասան յանկարծ յարձակած և սպաննուած էր, ուրիշ երեք անձանց հետ:

Չէրքէս Հասան Սուլթան-Ազիզի հարձերէն միտքն Եղբայրն էր, իր տիրոջ վրէժը կը լուծէր, որ ապա գրեթէ մեռեալ վիճակի մէջ կայսաղան բարձրացաւ Սուլթան-Բայազիտի հրապարակը:

Սուլթան-Ազիզը այդքան անբիւ անհամար հացկատակներու մէջ միայն մէկ անձնադիր բարեկամ ունի եղեր: Իսկ Սուլթան-Համիդ Ռուսօ-թիւրք պատերազմը վերջանալէ յետոյ Բիսմարքը ձեռք առաւ և անոր միջոցաւ գերմանիոյ երիտասարդ կայսրը ճանկը ձգեց, կառավարութեան սանձը էն մեծէն մինչև ամենայետիւնը ձեռք առաւ, Հայոց դէմ թշնամութիւնն հետզհետէ ակնուցուց, որովհետև հայերը յանդգնած էին

Բերլինի Վեհաժողովը պատգամաբար արժանապատիվ է հռչակում, բարի և ազատարար Առաջին Ազգային Սովետի ղեկավար Ստեփանոսի պայմանագրության 16-րդ յօդուածին գործադրությունը խնդրելու համար:

Այս բույժը սկսաւ Հայոց վրայ խեղձ հայի և չարչրկելու և կոտորելու հետամտիլ և յաջողեցաւ:

Բայց Թուրքիոյ մէջ Սուլթան-Համիդի բռնապետութեան միայն հայերը չէին: Թուրքերու քիչ թէ շատ զարգացեալ մասը շատ կոտորատներ սուտաւ, անզգոյշ նամակի մը, թեթև խօսքի մը, սնուսի ակնարկութեան մը հետևանքով:

Դժգոհութիւնն և տրտունջներն հետզհետեւ աւելցան:

Ասկից առաջ եկաւ այն կուսակցութեան նմանող ճղճիմ, անորոշ, անզոյն զանգուածը որ *Երիտասարդ Թուրքիա* անունը կուտայ իրեն:

Անտրանալի է, որ երիտասարդութեան ծաղիկ մասը շատ զոհեր տուաւ բռնութեան, Վասփորի նեղուցը լեզու ունենար և խօսէր, բայց արդիւնք՝ ոչինչ, վասն զի որոշ կազմակերպութիւն, հեղինակութիւն, առնական ոգի կը պակսէին, այս փափկասուն, մատղաշ երիտասարդաց մօտ:

Շատ-շատ հօրը մօրը կամ իր պետին սրբողոր կը փախչէր Երտոպա, հետը տարած քիչ մը դրամը կուտէր կը մսխէր Զրպէթի լիճը կամ Կարմիր ջաղացքը: Թերթ մը կը մրտտէր կամ տետրակ մը կը հրատարակէր հեռուէն հեռու, և կը կարծէր թէ այսպէսով իր դերը կատարած կը լինէր: Յետոյ մեղայագիր մը ուղղելով Պարիզի օսմանեան դեսպանատան, Պօլիս կը դառնար բերանին քիչ մը շաքար կպցունելով, ինչպէս որ վերը յիշեցինք Զիա-փաշան:

Այս միջոցներուն գտնուեցաւ խենթ մը որ առանց ի նկատի առնելու պարագայները և առանց կշռելու իր ոյժերը, Բումելիէ փախչող մերկ, սկլոր, ծարաւ-նօթի, մտրացիկ *մուհաճիբներ* (զաղթական) գլուխը ժողոված իբր 250-300 հոգի, լոյս ցերեկին, ոմանք բիրտով, ոմանք ժանգոտած սուրերով գրոհ սալ տուաւ Ալի Սուալի Էֆենտի Չրաղանի պալատին վրայ, որպէսզի անդամօր հսկողութեան ներքև գտնուող Սուլթան-Սուրադը բերէր և կրկին ի գահ բարձրացնէր:

Արեւորդ է յայտնել որ իսկոյն և էթ գօրքերն յարձակուեցան և այս ողորմելի *յեղափոխականները* տեղույն վրայ սպաննեցին, և պարագլուխնին, որ Երիտասարդ Թուրքերու գլխաւոր պարագլուխներէն մին էր, Ալի Սուալի կոչուած շոշորքը կտոր-կտոր դրին, նոյն իսկ հոգին փչելէ յետոյ:

Իրաւ և որ Սուլթան-Համիդ մեծ փափկանկատութեամբ և շրջա-հայեցութեամբ հալածեց Երիտասարդ Թուրքիան, որպէսզի այդ *համաճարակէն* միսներն ալ չի վարակուին, չի պշկին, այսուհանդերձ իրենցմէ և ղորս չեկան կարգ մը անձնագոհ մարդիկ որ, իրենց

պաշտպանած սկզբունքը առաջ տանին, նոյն իսկ ի պահանջել հարկի ի գին արեան:

Նոյն իսկ Հայոց կոտորածին ատեն չի գտնուեցաւ այդ մեծագոյ կուսակցութեան մարդ մը, անհատ մը որ ձայն բարձրացնէր, բողոքէր այդ ահռելի ջարդին դնողմ, երեք հարիւր հազար հայեր, երկրին արդիւնաբեր բազուկները կտտամահ կըլլային, և չեղաւ Երիտասարդ թուրք մը որ այս սրբապղծութեան, այս անորակելի անգթութեան դէմ բողոքէր:

Երիտասարդ Թուրքիոյ ամենամեծ, ամենաանդամաւոր և սխալն այն եղաւ որ չի կրցաւ համերաշխութիւն գոյացնել հպատակ ազգերու մէջ, անոր գլխաւոր վարդապետութիւնն է՝ *«Թուրքիան թուրքերուն»*:

Կ'ուզեն թէպէտ Օսմանեան սահմանադրութեան վերադարձը, պայմանաւ որ քրիստոնէայ տարրը իրենց հաւասար իրաւունքներ չի վայելէ, որովհետև թուրք ժողովուրդին անճարակութեան և մեծ մասին անբնորոշակութեան մասին իրենք իրենց համոզում գոյացուցած ոլլաով կը վախին որ հայը, յոյնը, մակեդոնացին գթութիւն կը գրեն կանցնին և հպատակ ժողովուրդը կ'օգտուի Ազատութիւն, Երբայրութիւն, Հաւասարութիւն կոչուած սոյն երբեակ նշանաբանէն:

Մեծ մասը այս գաղափարին կը ծառայէ: Մաս մ'ալ կայ որ սրբողած, առած, քալած ի փախտուսա շտապած է, և կ'սպասէ որ Ազրայէլը գայ Համիդին հոգին առնէ տանի, և ինքն ալ իբր *ի սլր հայրենեաց* վնասուող տառապեալ մարդ, դառնայ գայ իր աունը և շնորհքով պաշտօնի մը գլուխ անցնի ի փառս Ալլահի: Սուլթանի բեռորդիներուն վերադարձը գիտէր արդէն:

Թէ այսպիսի կազմակերպութիւն մը ի՞նչ արդիւնք կարող է ընձեռել երկրին, դիւրին է մակարեդել, և հարկ չկայ մանրամասնել:

* * *

Այժմ քննենք թէ ի՞նչ ապագայ կը խոստանայ Երիտասարդ Թուրքիայ:

Ֆաթիհ-Սուլթան-Մեհմեդ Բ. երբ Պօլիս գրաւեց, *«ինչո՞ւ քրիստոնէայները բռնի չ'իսլամացուց և կամ թուրք չ'անցուց»* - կը մորմոքէին, դառնապէս ըսելով, Երիտասարդ թուրքերը:

Այս խօսքը բաւական բնորոշող է և արտայայտիչ ապագոյց մ'է իրենց նկարագրին և հետևած ուղղութեան:

Երիտասարդ թուրքերու այս ցնորքը կամ երազը կրնա՞ր ի գլուխ ելնել. - ո՛չ, որովհետև իսլամաց պաշտած զիրքը, Գուրանը կ'ըսէ որ այն քրիստոնէայն որ հաւատարմութեամբ կը հպատակի և իր *խարածը* (տուրք) կը վճարէ, այդ քրիստոնէայն իբրև աստուածային *աւանդ* նկատելով անոր հետ ըստ այնմ վարուիլ պէտք կըլլայ:

Ֆաթիհ եթ սորա հակառակը գործէր, նոյն իսկ իր Գուրանին

ՀԱՅՈՑ ԴԵՐԸ ԹՈՒՐԹԻՈՅ ՄԷՁ

ընդդէմ շարժած պիտի լինէր: Այս մէկ: Երկրորդ, ամեն իսկամ, իր վարդապետութեան համաձայն պարտական է օրը հինգ անգամ խլամութեան երախիբի իր քրիստոնէայ դրացին, խրատելով, համոզելով և բազում բարիքներ խոստովալով թէ աստ և թէ հանդերձելում, ով որ սորա հակառակ շարժի՝ իր օրէնքին հակառակ շարժած կը լինի: Երրորդ, ենթադրենք թէ Ֆաթիի այդ լիմար գործը կատարեց, բայց այն ատեն երկրին վիճակն ի՞նչ կը լինէր:

Երկիր մը միայն սուրով առաջ չերթար, այլ խոփ պէտք է, ուրաք պէտք է, գրիչ և վրձին պէտք է, այսինքն երկրի մը զարգացման գլխաւոր պայմաններն են, երկրագործութիւնը, արհեստը և գեղարուեստը, առանց սոցա միմիայն սուրով երկիր մը չի կարող ծաղկիլ, աշխարհակայութիւն կարելի է սուրով, բայց այդ երկիրները պահելու և պահպանելու առաջին պայմաններն են վերև յիշուած պայմանները, ապա թէ ոչ առածին պէս ետ ստալու կը հարկադրուի աշխարհակալած երկիրները, ինչպէս որ պատմութիւնը կը հաստատու մեր այս ըսածը:

Երկրասարդ թուրքերու սոյն համոզման ծուռ և սխալ ըլլալը այսու ևս կը հաստատուի որ, այսօր Թուրքիա եթէ վիճակ մը ունի, այդ վիճակը քրիստոնէայ հպատակներուն և քրիստոնէից հետ շփումին կը պարտի. այլապէս, ի՞նչ տարբերութիւն կընար ունենալ մեծ կամ պզտիկ ասիական, կողիացեալ և կիսավայրենի բազմաթիւ ազգերէն և ժողովուրդներէն:

Կարծենք այս փաստերը բաւական են Երկրասարդ թուրքերու սխալ համոզումը ապացուցելու:

Եւ այսօր ևլ ճիշտ միևնոյն սխալ գաղափարին կը ծառայեն - *Թուրքիան՝ թուրքերուն* - դաւանելով:

Օսմանեան սահմանադրութիւնը գոր ստեպ կը յեղյեղեն, սոսկ պատրուակ մ'է և հպատակ ժողովուրդին աչքին փոշի փչելու միջոց մը, զի անկարելի բան է որ իրենք գան սա եզրակացութեան, թէ երկիրը հասարակաց է, ամեն ազգ որ այդ երկիրը կը բնակի միևնոյն իրատւոյններն ունի, ինչպէս որ միևնոյն պարտականութիւնն ունեցած է և կը կատարուի, եթէ նեղը մնան պիտի ըսեն, երկրին աւեր մենք ենք, դուք քրիստոնէայներդ *բայա էք*, այսինքն մեր երկրին արտոններուն մէջ *արածվող էք*, մենք ձեզ կը թոյլատրենք, որպէսզի ձեր կաթը կթենք և բուրդը խզենք, և եթէ ձեզ մի քիչ ազատութեան նմանող բան մը տանք, դուք շատ գոհ մնացէ՛ք, և աւելցուցէ՛ք ձեր կաթն ու բուրդը, որպէսզի մենք հանգիստ ապրենք, այդ մեր սուրին իրատւոյնն է (*բըլըճը մըն հաքքը դըր*):

Այս է Երկրասարդ Թուրքիայ ապագան, եթէ երբէք մի օր յաջողի որոշ կազմակերպութիւն մը ունենալ և հեղինակութիւն ձեռք ձգել:

Թանգիմաքին այս դին հայր ի՞նչ դեր ունեցավ Թուրքիայ մէջ, աւասիկ պիտի փորձեմ ուրուագծել համառօտիս:

Մինչև այն ատեն (1836) հայը հլու և հաւատարիմ հպատակ մ'էր և հին բարի թուրքերը իբրև Աստուծմէ աւանդ (Էման է թուլահ) կը նկատուէին հայերը:

Հայերն ալ իրենց կարգին մա նը-մունը առևտուրներով և արհեստներով կը պարապէին և փա՛ռք կուտային Աստուծոյ որ զիրենք և՛նհիչէրիներու ճիրաններէն ազատած էր, և հանգիստ պատառ մը հաց կուտէին, ասիկայ միջին դասակարգն էր:

Այն ատենները Թուրքիա գլխաւորաբար երեք քրիստոնէայ ազգ ունէր իրեն հպատակ, հայերը, յոյները և բուլկարները:

Բուլկարները գլխաւորաբար պարսիզպանութեամբ կզբաղէին: Յոյները՝ մանր-մունը առևտրով ինչպէս նպարավաճառութեամբ և մաավաճառութեամբ կը պարապէին. իսկ Հայոց բարձր դասակարգը սեղանաւորութեամբ, պետական կապալով կզբաղէր, այնպէս որ երկրին կըմտական կարևոր մասը գլխաւորաբար Հայոց ձեռքն էր:

Պետութիւնը յոյներուն լաւ աչօք չէր նայեր 1820էն, այսինքն Հելլադայի ապստամբութեան թուականէն սկսեալ, իբրև ազգակից և կրօնակից, մինչդեռ Պօլսոյ յոյներն հոռոմներ էին, պարզապէս հռովմայեցիներէ մնացորդներ, և բուն յոյները հելլեններն էին, սակայն թուրքը ասանկ բարակ բաներ մտածող չէր, և մինչև անկախութեան հաստատումը մեծամեծ գոհեր սուրին յոյները:

Ասկից դիտին է մակարերել որ Թուրքիայ մէջ յոյներն այն միջոցներուն կարևոր դեր մը չունէին, միայն քեռացի յոյներ սկսած էին վաճառականութեամբ զբաղիլ Յունաստանի անկախութենէ վերջը, իսկ երկրին ֆինանսական մասը թէ Պօլսոյ, թէ Անատոլի և թէ Բոսնիի Հայոց ձեռքն էր, Ամիրաներուն ձեռքը, ինչպէս Մաքսուդ Ամիրա, Ծանիկ Ամիրա, Շնորիք Ամիրա, Միսաք Ամիրա ևն, ևն, որք շատ-շատ իրենց ներկայացուցիչներն ունէին ամենուրեք իբրև փոքրիկ ամիրաներ:

Երկրին ընդհանուր մաքսային հասոյթը Եգէպիոյի Արտիչ Ամիրան վերցուցած էր առանձին, որոյ մասին ունինք խօսիլ:

Վառօղապետութիւնը որդոց որդի Տատեաններուն յանձնուած էր, բանակին հացի պիտոյքը Նորատունկեանները կը հոգային, Էթմէքճի-բաշի սիսողոսով:

Փողերանոցը Տիզևաններուն և ապա գազէզ Յարութինի յանձնուած էր: Յարութին Պ.զճեան գազէզը լոկ փողերանոցի (գարբ-հան) տեսուչ չէր, այլ Սուլթան-Մահմուդի աչքին լոյսը, աչ բազուկն էր դրամական գործերու մէջ:

1828ին Ռուսիոյ յաղթական բանակն «Երևանեան նահանգը» պարսիցնէ գրաւելէ յետոյ, դարձած էր դէպի Թուրքիոյ սահմաններն, և եկած բանակած էր Ադրիանուպօլիս գորավար Տիրիչ-Զարայկայսկիի:

Հիշենք անցողակի, որ Արաքսի հերոսը և Բասրէի աչ բազուկը գորավար Մատաթեանց, Բումլի անցնելով և Բուլկարիոյ մէջ հիւանդանալով ի Շամլու վախճանեցաւ, Ռուսաց բանակին մէջ հայազգի գորավարներն փառքին դրուագներ անկցնելով:

Եւ մենք շարունակենք մեր խօսքը:

Ռուսաց յաղթական բանակն իբրև պատերազմական տուգանք մէկ ու կէս միլիոն ոսկի կը պահանջէր, հակառակ պարագային, Պօլսոյ վրայ արշաւելու սպառնալիքով:

Սուլթան-Մահմուդ շուրաբձ մնացեր էր: Գանձը դրամ չի կար, բանակը ոչձ չունէր դիմադրելու, եւնիչէրիները քիչ առաջ մերձաւորապէս 120,000 հոգի մէջ տեղէն վերցուած էին, Ռուսիոյ սպառնալիքը խիստ էր:

Գազէզ, կայսեր ներկայանալով իր հնարիմացութեան ակնախառն փորձէ ցոյց տուաւ, Սուլթան-Մահմուդէ հրաման խնդրեց իր նոր կոխելիք դրամն ամենուրեք ընդունուելու համար, կայսրը տրամադրեր էր ամեն ինչ ընդունիլ. բաւական էր որ սա փորձանքը զլխէն հեռացնէր:

Փողերանոցը հիմէն մնացած մեծ քանակութեան անգործածելի արծաթ կար, իսկոյն գիշեր ցերեկ աշխատեցնելով կէսը պոլիմ, կէսը արծաթ, *հինգնոց, վեցնոց* կոչուած դրամներն հրապարակ հանեց, ժողովուրդին ոսկիները քաշեց, տուաւ տուգանքին, ռուսը մեկնեցաւ Ադրիանուպօլս, Բրուսիոյ դեսպանին միջնորդութեամբ քեպէտ և անագան ուրեմն, գործը գործէն անցնելէ յետոյ Երուպա, զլխաւորաբար Անգղիա դիտողութիւն կրնէր թէ այդքան վախճալու բան մը չի կար: Ինչ որ է, այն ըրալիս գազէզը ազատեց Պօլիսը, և մեռած պահուն, կայսրը ծպտեալ յուղարկի եկած էր վերջին անգամ գազէզի երեսը տեսնելու համար, և դառնապէս կ'արտասուէր:

Յիշենք փոքրիկ անկկատու մը: Մինչև այն ատեն քրիստոնէից համար ներելի չէր Պօլսոյ պարիսպներուն մէջ ննջեցեալ թաղել, այլ հարկադրուած էին էօթը աշարակներէն (Եղի Գալէ) դուրս փոխադրել, ուր հայերն և յոյները Պալքըրը կոչուած վայրում հանգստարաններ ունէին հոն կը թաղուէին, մէկ մասն ալ Պէրա Պանրալքիի գերեզմանատունը, որ Պօլսէ հեռի անմարդաբնակ էտ ընկած վայր էր, այն ատեն ինչ որ հիմա քրիստոնէից շնորհիւ Պօլսոյ ամենայարգի և շքեղ թաղն է:

Պէզճեան Յարութին Ամիրա փափաքելով Գում-Գափու Մայր եկեղեցոյ հովանոյն ներքև թաղուել յետ մահու, փոքրիկ հնարք մը կը խորհի և կը յայտղի:

Գազէզ Ամիրա ամեն առտու իրիկուն եկեղեցի կը գնար անխափան, և այժմ 195 տարուան գոյութիւն ունեցող դպրաց դասու ընկերութեան նախագահ և դպրապետն էր Մայր եկեղեցոյ: Եւ առաջ տօն օրեր շապիկ հագնելով դպրութիւն կ'ընէր, և ժողովուրդը դէպի եկեղեցին սէր, ակնածութիւն, յարգանք տածելու կ'առաջնորդէր: Եւ տեղը չէր այստեղ յիշել ֆրանսացի մեծագոյն բանաստեղծին Լամարտինի սա խօսքը թէ. «Երբ ժողովուրդը կը դադրի հաւատալէ, կը դադրի նոյն ժամայն գոյութիւն ունենալէ»: Եւ Քրիստոս չ'ըսա՞ միթէ «Հաւատք քո կեցուցեն զքեզ»:

Գառնանք գազէզի հնարքին: Առտու մը Սուլթան-Մահմուդ կարևոր մի գործի համար լուր կը դրկէ գազէզին որ շուտ գնայ պալատ, լուր կու տան իրեն և կը պատասխանէ որ «չէ՞ք տեսներ որ երկնաւոր թագաւորի առջև կերպագեմ: Կէս ժամ յետոյ դարձեալ կու գայ թիկնապահը և կը փութացնէ, դարձեալ նոյն պատասխանը կու տայ, և ի հարկէ գործին՝ մեծ կարևորութիւն մը չունենալը գիտնալով առաջուց: Կէս ժամ յետոյ նորէն կու գայ թիկնապահը և կայսեր սրտնեղութիւնը կը յայտնէ: Մի ժամ յետոյ երբ գազէզ պալատ կը գայ կայսրը սիրա նեղած կը հարցունէ թէ ո՞ր էր մինչև հիմա, կը պատասխանէ թէ եկեղեցումն էր. «Հա յ եկեղեցին մնաս», -կը յարելու Սուլթանը, իսկոյն հնարամիտ Պէզճեան, կը պատասխանէ Չերդ Լեհափառութիւն, ֆէրմանը տուր որ յետ մահու եկեղեցին թաղուիմ, Սուլթան-Մահմուդ իրագել յիմնելով հնարքին, կը ծիծաղի և ֆէրմանը կը շնորհէ որ եկեղեցին թաղուի յետ մահու, և այսպէս արժանանալով այն մաղթանքին որ կ'ըսէ, «Ողորմեա և այնուցիկ որք ընդ հովանեաւ սր. եկեղեցոյս են հանգուցեալ»:

Անցեալ դարու առաջին կիսուն մէջ հայ Ամիրաների նիւթական փառքը իր գազաթնակեալին հասած էր:

Սուլթան-Մեծիկ կայսրը Այ-Սուլթանու Ազալը Չըքմէքմէ որսի գնալու փափաք ունենալով տասնակ օրեր իր կայսերական հետևորդներով Տատեան Պօղոս Բէյի տունը հիւր կը մնար, և Տատեանց տան մէջ Սուլթանը իրեն յատուկ Թահթ օտասի անուամբ գահոյից սենեակ ունէր, որ իրեն առջև միայն կը բացուէր:

Անոնք որ օսմանեանց շքեղ կեանքին և ապրուստին ընտել են, անոնք միայն կրնան գաղափար կազմել թէ Սուլթան մը իր բազմաթիւ հետևորդներով տասնեակ օրեր իր տան մէջ հիւրասիրել ինչ պայմանների կարօտ էր:

Անցնինք այս, և ուրիշ մը ցոյց տանք:

Պօլսոյ Ոսկեղջիորի երկու մուտքերը Կալսաբայէ Ստամբուլ

առաջ նաուակներով կ'անցնէր ժողովուրդը, որ շատ դժուարութիւններ ունէր: Վալիդէ-Սուլթան այս մտաբեր համար փայտե կամուրջ մը շինել կու տայ որ քառորդ ժամու և կամ երկու վերստի երկարութիւն մը ունի, և մարդ գլուխ 10 փարա (2 շահի) մուտքի տուրք մը վճարելով կ'անցնէին, ասկից գոյացեալ հասոյթը արքունի նաւարանին յատկացնելով:

Բազմահարուստ Սկրտիչ Ամիրա ճակատիքեան Ոսկեղջիւրի ճիշտ մէջտեղէն նմանօրինակ փայտե կամուրջ մը շինել կու տայ իր քսակէն և անունը կը դնէ Հայրաթի բեօփրիւրի, այսինքն՝ տուրքէ ազատ, խերի կամուրջ:

Բարեմիտ, այլ գոռագ Ամիրային նպատակը թելալ բարի, սակայն Վալիդէ-Սուլթանի դէմ մի անսակ ըմբոստութիւն մեկնուելով, օսմանեան առաջանիին մէջ խուլ հակառակութիւն մը սկսաւ Սկրտիչ Ամիրայի ընդդէմ:

Այս միջադէպին, կայսեր փեսա և շատ ազդեցիկ Ալի Կալիբ-փաշա Սկրտիչ Ամիրայի տունը հրախորուելով գիշեր մը կ'անցունէ ամիրաներուն Կեորտանը Հասիէայի մէջ: Փաշան՝ տանը կարգ ու սարքը, ֆրանսական թանկագին կարասիները, սեղանին համակ ռսկեղէն սպասները, ննջասենեակը և այլ հոյակապ ճոխութիւնը տեսնելով և նախանձու վառելով, հետևյալ օրը տեղն ու անողը կը պատմէ Սուլթանին, անկցնելով որ ճակատիքի ունեցածներն կայսերական պալատը գորկ է բոլորովին: Ասոր վրայ մարտաւան հաշիւները կը քննուին, ունեցած շարժուն և անշարժ հարստութիւնն կը գրաւուի, և Սկրտիչ Ամիրա կաթուածահար կը վախճանի, գոհ երթալով իր հպարտութեան և անհետատեսութեան:

Բայց մենք շարունակենք մեր դասախօսութիւնը: 1856ին Խրիմի պատերազմը վերջացել էր թուրքիոյ ի նպաստ, Պարիզի դաշնադրութեամբ:

Յովհաննէս Պէյ Տասեան երկու անգամ Ֆրանսա ուղևորած էր վառօղի պատրաստութիւնը կատարելագործելու, ինչպէս որ պատերազմի միջոցին շատ բարձր զնահատուած էր ֆրանսացի և անգղիացի զորապետներէ օսմանցուց վառօղը:

Տասեան, վառօղ գատ, գործարաններու հետամտած էր և Պօլիս վերադարձին Ձէյքին Բուրնի տպածոյի և Եւզի Գալէի երկաթեղինաց և Նիկոմիդիոյ ասուեղէնի գործարաններն հաստատած էր:

Սուլթան-Մեծիդ բարի կայսրը գործարաններն այցելելով ի նշան իր բարձր գոհունակութեան երիցս կը հարցնէ պատուական Տասեանի. «Յովհաննէս, խրդրեալ յինէն և տաց թեզ»: Տասեան կը պատասխանէ. «Չերդ Վեհափառութիւն, Չեր ամեն շնորհներդ լի ու լի կը վայելեմ, միայն թէ կը հայցեմ որ Եւզի Գալէի Հայոց հիւանդանոցին հաց և միսի պարէն հատկացուի»: Ահա այն օրէն սկսաւ պարենը կապուիլ և յետոյ տեսցաւ:

Օսմանեան Սուլթանները հինաւորց սովորութիւն ունէին, իրենց օրով պալատներ կառուցանել:

Յիշենք անցողակի որ փողոցներուն լայնութեան, կանոնաւորութեան, հաղորդակցութեան դիւրութեան ալ եթէ հոգ տարուէր գէշ չէր ըլլար ի հարկէ:

Արքունի ճարտարապետ Կարապետ Ամիրայի որդին՝ բարեկիշատակ Նիկողոս Պալեան ուսումը բազմարուեստեան վարժարանում մոր աւարտած և Պարիզէ դարձած էր Պօլիս: Դօլմա Բահճէի պալատի շինութիւնն սկսաւ, և եթէ այդ պալատը Պօլտոյ զարդերուն մին կը կազմէ, ոչ նուազ պատուաբեր է Հայ հանճարին:

1861ին Սուլթան-Մեծիդին կը յաջողէր եղբայրը՝ Սուլթան-Ազիզ:

Արդէն Սուլթան-Մեծիդի վերջին օրերուն Երոտպա քսակի բերանը բացը էր թուրքիոյ առջև: Գօնոս Լիդէն հաստատուած և փոխաւորութիւնը փոխաւորութեանց կը յաջողէին: Այն ատենէն թուրքիա սկսած էր պարտքի ներքև մտնել: Ոսկին, ըստ ռամիկ բացաւորութեան, չուրկուր պէս կը վազէր:

Ոսկիի այն առատութենէն թիչ թէ շատ հայերը օգտուեցան ի հարկէ, բայց յոյները ևս առաւել օգուտ քաղեցին, վաճառականութեան մէջ շատ զարգացան: Մինչդեռ հայերը, մանաւանդ կարողիկները վաստկած դրամնին թուրքերուն կերցուցին, անոնց հաշոյն աշխատած եղան: Թուրք փաշաներու, բէկերու սարաֆներն էին: Չոր օրինակ Տիւզ Օղլու, Կեօվա Օղլու, Ալիսիկերդի Օղլու, Մրսաղլու Օղլու, Հալաս Օղլու, Թընկըր Օղլու են ևն:

Միս կողմէ Սուլթան-Ազիզ ևս շինութեանց շատ փափար ունէր, ալրադանի, բէլլէր բէլի պալատները, զինուորանոցները, զինուորական վարժարանները, Բոսֆօրի երկու եզերքի արքունի շքեղ շէնքերը ևն ևն, Հայ մաքի և ձեռքի արդիւնքն էին. Սարգիս և Յակոբ Բէյ Պալեաններն էին և Զմեհաճեան Բէյի շնորհիլ:

Ինչպէս ըսինք, հայր իր սովորական ճկուն և ճարպիկ քաղաքականութեամբ թուրք ժողովուրդին ընդհանրապէս և պետական պաշտօնատարաց մասնաւորապէս համարումն ու վստահութիւնը գրաւած էր, այնպէս որ ամեն մեծ նախարարի մը բով հայ մը կար խորհրդական և օգնական, օրինակ, անուանի Բէշիկ-փաշայի մօտ լոգօթէր Յակոբ Կրճիկեան, ծովակալ Մեմէդ Ալի-փաշայի մօտ Յովսէփ Վարդան-փաշա, եպարքոս Ալի-փաշայի մօտ Համամճեան, Սէֆերեան, Ֆուադ-փաշայի մօտ Սէրվիշէն Էֆենտի, Ապրօ Սահակ Էֆենտի, Մահմուդ Նեղիմ-փաշայի մօտ Յարութիւն-փաշա Տասեան, Ճելվէր-փաշայի մօտ Վահան Էֆենտի, Միտհաթ-փաշայի մօտ Օստեան Էֆենտի, Ինկիլէզ Մալիդ-փաշայի մօտ Դուրեան Էֆենտի, Դերվէր-փաշայի մօտ Կոստանդ-փաշա ևն ևն:

Կայսեր անձնական զանձը յանձնուած էր միշտ հայերու, ինչպէս Յակոբ-փաշա Գազեզեան, Միքայէլ-փաշա Փօրթուրալ, Յովհաննէս Էֆենտի Սաբրզ, նոյն իսկ հայաստեաց Սուլթանի օրով:

Ելմտական նախարարութիւնը իր ամենատազնապալի վիճակին մէջ Յակոբ-փաշա Գազեզեանի յանձնուեցաւ, իսկ շատ անգամներ խորհրդական եղան Տատեան և Փօրթուրալ փաշաները:

Իսկ Հայաստանի գիղացին իբրև շիտակ և ուղղամիտ հաւատարիմ մարդ իր տեղն ունէր փաշաներու, բեզերու ասպարանից մէջ իբրև տնտես, վերակացու, իբրև խոհարար, և իբրև սպասաւոր:

Փաշային կամ բեզին աղջիկը կամ տղան, հօրը կամ մօրը վշտանալուն պէս կը վազէին Այվազին մօտ, նա ևս խրատելով հանձնելով կը տանէր կը հաշտեցնէր, մէկ խօսքով Այվազ եղբայրը տանը մարդն էր, տանը սրտակիցը և գաղտնապահը: Նոյն իսկ Կարմիր գազանին խոհարարապետը հայ մ'էր վանցի Մանուկ Աղա:

1864ին Գրիգոր Էֆենտի Աղաթօն նոր դարձած էր Ֆրանսայէ: Օսմանեան հեռագրական թղթատարութեան և հանրային շինութեանց վարչութիւններու վիճակը խիստ աննախանձելի թշուառ դրութեան մէջ էր: Աղաթօն Էֆենտի յանձնուեցաւ այս երեք ճիղերուն միանգամայն նախարարութիւնը, և հայագի մեծանուն պետական մարդը երեք նախարարութիւնները միաժամանակ զոհացուցիչ կերպով վարեց և գործեց կարգ կանոն դնելով, որուն շարունակութիւնն է արդի վիճակը:

Արքունի բժշկական վարժարանը բացուեցաւ, որ շատ մը հայ բժիշկներ հայրայթեց երկրին, և որուն զլխատը դասախօսները եղան Մերվիչէն (Մերովրէ Վիչէնեան, Մանկատաժութեան մեծանուն եեղինակը), Նահապետ Ռոսիմեան, Խնդամեան, Ա. Կրճիկեան, Ս. Արսլանեան ևն ևն:

Միս պետական վարժարաններու մէջ անուանի և օգտակար դասաւանդներ եղան Փօրթուրալ-փաշա, Թովմաս Թերզեան, Յովսէփ Եուսուֆեան, Միլիթան Գարաբաշ, Տիրան Քէլիկեան ևն ևն:

Պետական պաշտօնարաններու հաշուապահութեանց մէջ կրկնատումարի դրութիւնը ներմուծեցին Կարապետ Բարաբաշ, Խորեան, Գոյումճեան ևն: Թուրքիոյ երկրագործական բանքը Յովհաննէս Նուրեան յղացաւ, ինչպէս նաև Կարմիր մահիկը Նուրեան հաստատեց:

Յարութիւն-փաշա Տատեան երկար տարիներ արտաքին գործոց նախարարութեան հոգին եղաւ իբրև խորհրդական, բայց գործին վարիչն ինք էր:

Հանքաց և անտառաց վերատեսչութիւնը յանձնուեցաւ Պետրոս Էֆենտի Գոյումճեանի որ զոհացուցիչ կերպով պաշտօնավարեց, սորա որդին էր Յովհաննէս-փաշա որ Լիբանանի կուսակալ կարգուեցաւ:

Հանրային շինութեանց նախարարութեան մէջ անուանի պաշտօնատարներ եղան Օտեան, Մարկոսեան, Ասլանեան ևն:

Թուրքիոյ շերամարմութեան կարևոր գործին հոգին էր Գէորգ Թորգոմեան:

Ա՛խ, յիշենք անցողակի՛ ինչ պատուական պաշտօնաւար է հայր երբ օտարին կը ծառայէ... Այս կարգի բոլոր պաշտօններ և ասպարեզներ բաց էին Հայոց առջև, որոց մէջ հայերը փայլեցան և երկրին ծառայեցին:

Ինչպէս կը տեսնէք, յոյները մեծ դեր մը չունեցան պետական այս կարգի պաշտօններու մէջ, ի բաց առեալ երկու դեսպան (Լօնդրա և Բրիստօլ), երկու կուսակալ (Կրէտէ և Ադրիանուպօլիս) և մէկ արտաքին գործոց նախարար (Ալեքսանդր-փաշա Գարաթօղորի):

Չինուորական ասպարեզը բոլորովին փակ էր հպատակներու (ռայաներու) համար:

1864ին բացուած զինուորական վարժարանի մէջ հայեր ալ ընդունուեցան, թուով 5 հոգի. առաջին անգամ խօսք կար մինչև գօրապետութեան աստիճանի բարձրացումի, հետոյ զոջացին այլ և այլ կանխակալ մտածութիւններով և մինչև հարյուրապետութեան աստիճան խոստացան, հայերն ալ մէկ մէկ պատրուակով հրաժարեցան:

1876 թուականին Հէրէթ-Բոսնայի ապստամբութիւնը ծագել էր, և ապագան լաւ բաներ չէր խոստանար: Բ. դուռը առաջարկեց հայոցմէ զինուոր առնել, Ներսէս պատրիարք, փոխանակ գլխահարկի, համակերպեցաւ հայոցմէ զինուոր տալու, պայմանաւ որ հայերը բոլոր զինուորներու մէջ չի խառնուէին, այլ զատ գունդ, զատ դրօշակ և զատ գօրապետ ունենային: Պետութիւնն այս հակառաջարկին չի հաւանեցաւ և հետևաբար զինուորատուութիւնն էս մնաց:

Դուռը կ'ուզէր օսմանեան բանակին մէջ համեմատաբար մեծ թուով գօրք ունենալ, Ներսէս Վարժապետեան ալ կ'ուզէր հայ զինուորին ծառայութիւնը մասնանիշել:

Պետութիւնն արդեն սուկումով կը դիտէր Լազարեվի, Տէր-Ղուկասօֆի, Մելիքօֆի վրայ. չուզեց դժուարութիւն մ'ալ ինք բարդել արդէն կեցած դժուարութեանց վրայ իր իսկ ձեռամբ:

* * *

Հայերը Ազգ. սահմանադրութեան տարեդարձը Բօսֆորի փոխմը Քէլքօզ կը սօսէին: 1863 թուականին երբ 20 շոգենաւեր դրօշակներով զարդարուած եպարքոս Ալի-փաշայի Բէրլքի ծովեզերեայ ասպարանքին առջև նուագարաններով կերթան նուագել և Սահմանադրութեան վերադարձին առթիւ շնորհակալութիւն յայանել, ինչ որ պահ մը պետական հարուածով դադրեցուցած էր. Ալի-փաշա իր զոհունակու-

թիւնն յայտնելով հանդերձ քովը նստող իր մէկ բարեկամին կը յայտնէ իր հինգնուրբ՝ ըսելով թէ «Ես պօռտախօս և բարձրագոյ յոյներէն չեմ վայսնար, ես հայոցմէ կը վայսնամ, որք լիկ մնչիկ կը գործեն և մեր ժողովուրդին հետ սերտ շփման մէջ են, կը կասկածեմ որ այս կարևոր տարրը օրին մէկը օսմանեան ազգին հետ միանալով երկրին մէջ յեղափոխութիւն մը պատրաստեն»:

Ընշաւ այսպէս կը խորհէր եպարքոս Ֆուադ-փաշա, որ իր վերջին կտակին մէջ հայոց վրայ ուշադիր գտնուելու մեծ պէտքին նկատմամբ շեշտած է:

Ասկից դիրքին է մակարելու որ հայերն սկսած էին երկրին մէջ կարևոր տարր մ'ըլլալ, ի հարկէ իրենց մէջ ունեցած դերով և դիրքով:

Մեծ եպարքոս Միտհաթ-փաշա խնդիրն ուրիշ տեսակէտով կը քննէր, ինքը գաղափարի մարդ էր, և իրեն խորհրդական և գործակից ունէր Օտեան Գրիգոր Էֆէնտի, արքայապետին գաղափարի մարդը: Գիտէր թէ հոսանքին առջև առնել հնար չէր, բայց մի և նոյն ատեն Օտեանի հետ խմբագրած Սահմանադրութիւնը մէջ տեղ դնելով 1876ին, ինքն այն համոզման եկած էր որ երկրին մէջ ազատութիւնն և հաւասարութիւնը տիրելով, թէպէտ և ատկից, աւելի հպատակները պիտի օգտուէին, բայց թուրք ժողովուրդն ալ կամայ ակամայ պիտի իրեն հետ քաշէր տանէր, և թուրք ժողովուրդն իբրև բազմաթիւ և իբրև տիրող ազգ պիտի կարենար իր առաջնութիւնը պահել:

1876ին Հէրալդ-Բօսնայի վերաբերմամբ Ռուսաց Պրօտօքօլը մերժելու վրայ էր Միտհաթ, առարկելով որ առասիկ թուրքիա Սահմանադրութիւն կը հրատարակէ և յետ այսօրիկ հարստահարութիւնը երկրէն ի փախուստ պիտի շտապին, երեսփոխանական ժողովի մէջ ամեն զաւառ իր ներկայացուցիչն ունենալով՝ ամեն երեսփոխան կարող է իր երկրին ցաւերը բացասել և դարմանը պահանջել:

Իրաւ որ Ռուսիա այս խօսքերուն կարևորութիւն չի տուաւ և պատերազմը շարունակեց: Բայց ասիկայ փաստ է որ թողունք Պօլսէն ընտրուած հայ երեսփոխանները, որք թիչ թէ շատ սահմանադրական կեանքի վարժ էին, այլ գաւառային երեսփոխաններն, ինչպէս Կարնոյ, Երզնկայի, Մերաստիոյ և Բերիոյ (Հալէր) երեսփոխանները (Պալլարեան, Գազանճեան, Շիրինեան և Խարաճեան) պահ մը ապշեցուցին կեղորներ իրենց պերճախօսութեամբ, լրջութեամբ և շրջահայեաց դիտողութիւններով: Այս կը նշանակէր թէ գաւառներն ալ թիչ շատ վարժուած էին սահմանադրական կեանքի:

[Ափսոս որ կործանեցին, և կործանողին ո՛վ ըլլալը հարկ չի կայ բացատրելու]:

Օսմանեան սահմանադրութիւնն իբրև օրէնք ըստինքեան գլուխգործոց մը չէր, համեմատած Միացեալ Նահանգաց, Անգղիոյ և Ֆրան-

սայի սահմանադրութեանց, բայց ուշիմ քննադատն ի հարկէ աչքէ չի վրիպեցներ տեղական հանգամանքը և ասիական ժողովուրդի մը հետ գործ ունենալը, որ շատ կարևոր կէտ մ'է:

Ազատ մտածութիւնը սկսած էին փոքր առ փոքր սպորտիլ թուրք ժողովուրդին մէջ: Թուրքը առ տակաւ սկսած էր զարգացման շարժի մէջ մտնել ի հարկէ Ֆրանսայէ ազդուելով, բայց անշուշտ հայոց ներգործութեամբ:

Եւ ազատախոհներու դպրոցին գլխաւոր վարպետը՝ յուրջ և շրջահայեաց եպարքոս Ալի-փաշա կտակ մը թողած էր, որ յետ մահու բացուեցաւ: Այդ կտակն իրեն բնաբան ընտրած էր թուրքաց անուանի բանաստեղծ և Հրաշախօս (Մուճիզէկու) մականունեալ Հէրֆիի հետևյալ տողերը.

Հնուտ եղիր, զգայուն եղիր,

Բարի և այլասէր,

Ո՛չ քանձրը միտիւլման,

Ո՛չ անհաւատ, անաստուած՝ եղիր:

Ալի-փաշայի դպրոցին հաւատքի և գաղափարի հանգանակը կը կազմեն սոյն տողեր, որ բազմաթիւ ետևողներ ունեցաւ:

Այս շքօլան իրեն կէտ նպատակի ունէր ասալիճանաբար երկրին զարգացումը, արդարութեան գործադրութիւն, տեղական բարեկրթութեան, հպատակներ անդորր սպրդէին, բայց թուրք տարրը միշտ գերակշռող դեր ունենար, իբրև տիրող ազգ: Եւ ամեն ազգ այսպէս պիտի խորհէր ի հարկէ, այնպէս չէ՞:

Ծայրայեղ արմատական սկզբունքներու հետամուտ չէր և չէր իսկ կրնար լինիլ քանի որ երկրին հանգամանքը միշտ ի նկատի ունէր: Ալի-փաշա իր ժամանակին հետև մեծ դիւանագէտ համայն Երտպայի մէջ իր անունն ունէր, իբրև լրջամիտ շրջահայեաց և հայրենասէր անձ:

Շատ անգամ իրեն խորհրդական ունեցաւ Օտեան Գրիգոր Էֆէնտին, որ ժամանակին «Մասիս» մէջ բարձրագոյ կ'աղաղակէր շարունակելի յօդուածներով, թէ «տէրութեան և հայ ազգին շահերը մի են, թէ պետութիւնը մարմինն է և հպատակներն անոր ջիղերն են, կրակներն են. կարէ երակը ջիղը և նոյնժամայն մարմինը կը դադրի գոյութիւն ունենալ, մենք Հայաստան ըսենք, Դուռն ալ իր բարգաւաճ մի նահանգը հասկանայ»:

Այս և ասոնց մօտ գաղափարներ էին որովք հրապարակը կ'ողողուէր:

Եթէ ճշմարիտ է թէ երկրի մը հարստութեան գլխաւոր աղբիւրներն են արհեստը, վաճառականութիւնը և երկրագործութիւնը, այս երեք ճիղերուն մէջ էլ, հայր թուրքիոյ մէջ իր առաջնակարգ դերը ունեցաւ:

Մէկ քանի մանաւանդ արհեստներ, ինչպէս կոշկակարութիւն, ատաղձագործութիւն, որմնադրութիւն յոյներուն բաժին էին գլխաւորաբար, իսկ միւս բոլոր արհեստներն և արուեստներն հայոց ձեռքն էին ոսկերչութենէն սկսեալ մինչև մեքենայագործութիւն, սատափի նուրբ բանուածներ, գեղեցկակերտ ասեղնագործութիւն, և այլ ամեն առտնին պէտքեր հայթայթող արհեստներ հայոց ձեռքն էին:

Երկրագործութեան մէջ յոյնը կարևոր դեր մը չունեցաւ ի բաց առեալ Էգէական ծովի շրջականերն ու Արքիպեղագոսի կղզիներուն ձիթագործութիւնը և այգեգործութիւնը որ տարամերձօրէն յունաց կը պատկանէին, իսկ բաց դաշտի վրայ երկրագործութիւնը թրքաց և գլխաւորապէս հայոց կը պատկանէր:

Վաճառականութիւնը երկար ատեն հայոց և յունաց ձեռքը մնաց, սա միակ տարրերութեամբ որ յոյնը ներածութեամբ կը վրադէր, երկրին արիւնը կը բամբէր ըսել է, վասն զի ինք միջնորդի դերը կը կատարէր Եւրոպայի և Թուրքիոյ միջև, Անգղիոյ, Ֆրանսայի ապրանքները Թուրքիա մտցնելով: Մինչդէռ հայը գլխաւորաբար արտածութեամբ կը վրադէր երկրին երակներուն արիւն կը բերէր, Փոքր Ասիոյ և Միւրիոյ անկիւններէն երկրին բերքը կ'արտածէր Ֆրանսա, Անգղիա և Ամերիկա, և անոնց ոսկիները Թուրքիա կը մտցնէր: Եւ եթէ ի նկատի ունենանք երկրին անապահով վիճակը, հաղորդակցութեան և փոխադրութեանց դժուարութիւնները, այն աստեղ կրնանք դիտար համոզուիլ որ Թուրքիոյ մէջ հայոց վաճառականութիւնը տեսակ մը մարտիրոսութեանց և ինքն իրեն համոզում գոյացուցեր էր թէ վաճառականութեան աներաժեշտ պայմաններ են այս դժուարութիւնք, մինչդէռ ընդհակառակը:

Հայ ժողովուրդը գաւառներուն պետութեան կը վճարէր գլխա-հարկ (զինուորութենէն ազատ ըլլալու տուրք), կալուածական տուրք, տասանորդի տուրք, շահարաժիւն (թմէթթիւ), ճանապարհի շինութեան տուրք (անձամբ կամ դրամով), վերջապէս անթիւ անհամար տուրքեր զանազան անուաններով պարտուած, և այս տուրքերով էր որ պետութեան գանձարանը հոսելով թուրք պաշտօնատարութիւնը կ'ուտէր կը խմէր և հանգիստ կ'ապրէր, հետզհետեւ եկամտուններ դիզելով, ապագայ հաւանական շնորհակալութեանց և պաշտօնանկութեանց առ ի ապահովութիւն:

Օսմանի ժողովուրդը վաճառական ժողովուրդ եղած չէ, մէկ քանի փոքրաթիւ բացառութիւններն ի հարկէ նշանակելի տակոս չեն կազմեր:

Օսմանցոյն բոլոր երազը պետական պաշտօնի մը կոչուի, քանի մը տարի աշխատել յետոյ խոստովանելի և կամ շատ հեղ անխոստովանելի միջոցներով առաջ անցնիլ և պաշտօնի մը գլուխ

կենայ, այս կը կազմէր: Այլևս այնուհետև ասպարէզը լայն արձակ բաց էր առջը, որքան ուզէր կարող էր առաջանալ իր ընտրած միջոցներով:

* * *

Եթէ կը հաւատանք թէ մամուլը և թատրոնը ժողովուրդի մը մտաւոր զարգացման և դպրութեան կարևոր գործիքներուն օղակները կը կազմեն, գովութեամբ պէտք է արձանագրենք որ հայր այս ճիւղերուն մէջ ևս իր աշխատութեան բաժինն ունեցաւ:

Օսմանցոց Կ.տիք-փաշայի, Վեզնէ Ծիլէրի, Գաղթբլօյի թատրոններուն մէջ Վարդուկեան (ուրացողը), Պլնկլեան, Ռշտունի, Չափրաստճեան, Ֆասուլեան, Մնակեան, Աղամեան իրենց աշխատութիւնները ունեցան և թուրքին մէջ թատրոնի ճաշակը ներմուծեցին: Նշանակելի է որ յոյն տարրը գոնէ մէկ հաս դերասան կամ դերասանուհի չի տուաւ օսմանեան թատրոնին, որովհետև ընդունակ չէր, գլխաւորապէս օսմանեան լեզուն չէր կարող ուղիղ արտասանել:

Հին բարբառս ասեմներ, գլխաւորաբար Հեղադայի ապստամբութեան միջոցին, թուրքը հասկնալու համար թէ դէմինը հայ էր թէ յոյն, համբել կու տար անոր- բիր, իքի, իօջ - կը հասկցուէր թէ հայ էր. բայց յոյնը կը համբէր - բիր, իքի, ուց - յոյնը *իօջ* չէր կրնար արտասանել և այս շատ անգամ առիթ կը ըլլար թուրքին ըսելու, *բլլլ ուջ* - «գլուխ, բախր», և նոյնժամայն խեղճ յոյնին գլուխը գետին կը թաւալէր:

Օսմանցոյն հարեմական կեանքը և իսլամական կրօնը չէին ներեր, որ թուրք կինը բեմ ելնէ, հետևաբար այս նկատմամբ օսմանեան թատրոնը մեծ և նշանակելի զարգացում առած չէ: Մինչդէռ հայ թատրոնը հակառակ հազարաւոր ճնշումների. յայտնեցաւ օր օրի զարգանալ Գարաքաշեան քոյրերի, Պէփրճևանի, Սիրանոյշի. Հրաչեայի և նմանակցութեամբ:

Դառնանք մամուլին:

Առաջին անգամ Թուրքիոյ մէջ անգղիացի մը, Չոր Չէլ անուն, հրատարակեց «Թազիմը», որ շարաթական յուրերու թերթ մ'էր, նշանակելի դեր մը չունէր:

Վաթսունական թուականներուն հայոց մէջ մամուլը ըստ բաւականին զարգացած էր, ունէր «Մասիսը», «Կիլիկիան», «Մեղուն», «Երևակը» ևն: Իսկ թրքախօս հայոց և հայ կաթոլիկների համար հայերն ունէին «Միւնատիմ» (ապա «Մանգումէի Էֆքիար») և Փանոսեանի և «Մէճմուաի Հաւատիսը», Յովսէփ Վարդանեանի (Վարդան-փաշա) հայաստաւ և թրքաբարբառ թերթերը:

Վարդան-փաշա, չի նայելով որ այն ատեններ շատ հաշտ աչօք չէր նայեր հայոց շարժումներուն և ամեն անգամ առիթ ներկայանալուն հաճոյք կը գտար գոգես, գայնս ծաղկելու, բայց իբրև թարգմանիչ, իբրև

խմբագրապետ և իբրև գիտուն ներհուն մարդ, իրաւունք ստացած էր անուն մը շինելու երկար ապրելու: Վարդան-փաշա՝ մեր առաջնակարգ լրագրող Բիզանդ Բէլեանի առաջին վարպետը:

Թուրք տարրը ծարաւի էր մամուլի պատուին: Իրեններուն մէջը բաւական աղբիւրներ չի կային իր ծարաւը յագեցնելու, ուստի ստիպեալ, շատեր, հայոց այբուբենը սովորեցան թրքախօս «Մէճմուա» և «Մանգումէ» կարդալու համար:

Յիշենք անցողակի որ հայ տառերուն ճշգրիտ հնչումներուն, աւելի կամ պակաս անհունչ տառեր չի գտնուելուն համար, Ֆուադ-փաշա, մտադիր էր պաշտօնական գրութիւնները ս. Մարտի տառերով խմբագրել տալ, բայց օսմանցւոյն ազգային փառասիրական ձգտումներուն ներհակ գտնուելուն հետևանքօք ետ թողուեցաւ:

Հայր՝ թուրք տարրին մտաւոր գարգացումին ալ իրավասանն աշխատեցաւ անոր թրքերէն թերթեր և թարգմանութիւններ տալով:

Ողբացեալ Յակոբ Պարոնեան «Թէւաթօ» անունով թրքերէն գաւեշտաթերթը հրատարակեց օսմանցւոց ընթերցասիրական ճաշակն արծարծելու համար, Ա.Ճէվահիրճեան և Ալեքսան Էֆենտի «Իրրէթ» և այլ թերթեր հրատարակեցին, Պօղոս Պառնասեան, Տիրան Բէլէկեան մէկ քանի կարևոր թուրք թերթերու գլխաւոր խմբագիրներն էին, և տակաւին շատ ուրիշներ, զորս թուել երկար պիտի ըլլար:

Այսօր իսկ Պօլսոյ առաջնակարգ թերթը «Մարախ»ի պէտ և անօրէնը հայ մ'է կեսարացի Միհրան Էֆենտի Նաբաշեան և արժանացած է Բիթթէի Բալէա աստիճանին, որ վեգիթուսենն անմիջապէս առաջ եկած բարձրագոյն աստիճանն է, և որուն անուանի խմբագրապետն էր Տիրան Բէլէկեան:

Թուրք գիրքերու վաճառողները և տպագրիչները հայեր էին, կը տպէին ո՞րքան որ օսմանեան ժողովուրդը կրնար մարսել և մանաւանդ գրաքննութիւնը-Մանսիւղը- կը ներէր: Այս պարագային դիւրին է մակաբերել որ հայը չէր կարող մեծ տաղանդներ և գաղափարական գրուածներ հրատարակել, որովհետև ժողովուրդը չէր մարսեր և գրաքննութիւնը չէր թոյլատրեր, այլ հայը միջին ճամբայ մը ընտրած էր, այսինքն հրատարակել այնպիսի գրուածներ որոցմով կարելի ըլլար ընթերցասիրութիւնը քիչ-քիչ տարածել: Թուրք հեղինակները կամ թարգմանիչներն ալ այս ընթացքը բռնած էին, ուրիշ կերպ ընել կարելի չէր:

Տպարաններու գրաշարները մեծ մասամբ հայեր էին:

Թուրք տպագրական տառերը յոկող, ձևի բերող, նոր տառեր ձուլող, մէկ խօսքով օսմանցւոց տպագրութեան պէտքերը լիովին հայթայթողը հայ մը եղաւ Յովհաննէս Միւհենտիսեան, որուն նկատմամբ մինչև վերջին ատեններ թուրքերը յարգանք կը խօսէին և օրհնութեամբ

կը յիշատակէին անունը: [Օսմանեան գրականութեան և մամուլի տպանութեան պատճառն այլոր պէտք չէ փնտրել. գրաքննութեան խիստ օրէնքն է: Մոմճեան, ուսուցիչը պատերազմի պատկերագրող պատմութիւնը հրատարակած էր. գրաքննութիւնը հաւաքել առաւ:]

Պօլսոյ պարսիկ մը, Թահիր Էֆենտի, պարսկերէն շարքաթերթ մը կը հրատարակէր, որուն անունն էր «Այսուր», այդ անունը պատճառ դարձաւ որ մարդուն բաղախն աստղը վայելցնէր:

Այսուր, ինչպէս գիտենք, *աստղ* կը նշանակէ, աստղը՝ թուրքերէն *երլորդ* կը նշանակէ, և որովհետև մահկանացւոց ներքի չէր *երլորդ* բառը բերան առնել վասն զի Համիդ ինն կը բնակէր, թերթը դադարեցուցին և խմբագիր-տէրը Մ.Արիֆի (ուսատրութեան պաշտօնատուն) ժողովոյն անդամ եղաւ 25 ոսկի ամսականով, իրեն ուզածն էլ այս էր արդէն...:

Օսմանցւոց առաջին գրագէտն և տաղանդաւոր հեղինակն Ահմէդ Միդհաթ Էֆենտի, որ մնանը չունի իրեններուն մէջ «Թէրճիմանը Հաքիթէթ» (Արդարութեան քարգման) թերթը կը հրատարակէր, բայց ո՞րք քարգման, ո՞րք արդարութիւն, խեղճին բերանը փակելու համար «Միհիլ, Մըլիսի» (Առողջպահիկ ժողով) նետած էին, թերևս իր առողջութիւնը դարմանելու համար...:

Իջնենք պահ մը ժողովուրդին յայն խաւերուն մէջ:

Գիտէք արդէն որ Թուրքիա բաւական լաւ յաջող քնարերգակ բանաստեղծներ ունեցած է, ինչպէս Նէֆի, Ֆիզուլի, Բաքի, Բուհի, Վասրֆ, Բադիթ, Նէլի, Աղի (Մուլթան-Մահմուդ ինքը) և իզական սեռէն Ֆըթմաթ Հանըմ, Լէյլա Հանըմ, Նիկիար Հանըմ ևն ևն, որք արարական և մանաւանդ սարսիկ բանաստեղծները, ներշնչուելով բաւական նշանաւոր գործեր արտադրած են:

Յիշենք հայոցմը. Նախան Յակոբ պատրիարք. Մանուկ Չորսճեան, Պապա Յակոբճեան, Բեգարի և նոր վախճանող Հերթիկ Հօճա, որոց գործերն, մեծ մասամբ ափսոս և կորսուած են:

Թուրք բանաստեղծն եթէ, մէկ կողմ սերը, գինին կերպէր, միս կողմ ևս սրախօսութիւն Հիմվէյէ (յարձակողական) կը գրէր, և ըսել ուզած բայց յայտնի չի համարձակածը սրախօսութեամբ կը յայտնէր: Այս բարձր դասը կը կոչուէր գրչի բանաստեղծ (քալէմ շուարասը), իսկ անոնք որ հարսանեաց, տօներու և գիշերները սրճարանները կերպէին և քնար, չնկիւռ կածէին, ասոնք ալ կը կոչուէին հրապարակի բանաստեղծ (մէլդան շուարասը) և կամ ինչպէս որ սովորաբար կըսուի՝ աշուղ:

Ասոնց մէջ ևս հայերը իրենց որոշ տեղը բռնած են: Ալեհաի, Ճիդաի, Լիսանի, Մէրվլի, Բիւրեանի, Մահմուդի, Նամի ևն ևն:

Բանագանի գիշերներ հանելուկ (մուամմա) կը կախէին

սրճարանները և խառն բազմութիւն կը լցուէր հոն, ով որ կարենար լուծել հանելուկը, գոյացեալ ամբողջ հասոյթը՝ 30-40-50 ոսկի իրեն կը պատկանէր:

Նամի (ատաղձագործ Յակոբ) ասպարէն նշանաւոր էր, և նմանը չունէր թէ պալատի և թէ հրապարակի աշուղներու մէջ:

Տարի մը բոլոր աշուղներուն ասպարէզ կարդաց, նոյն իսկ գրչի քերթողներուն որ գային մրցիլ իրեն հետ, ամբողջ մայրաքաղաքին մէջ ոչ ոք չի համարձակեցաւ ասպարէզ մտնելու Նամիի դէմ, իսկո՞ւ տղան ծաղիկ հասակի մէջ ծաղիկ հիւանդութենէ մեռաւ:

Նշանակելի է որ բնաւ թուրք լեզուով յոյն քերթող կամ աշուղ տեսնուած չէ, շնորհքով բան մը:

Վերջերս այս աշուղներն ալ Պօլիս դադրեցուցած, արգելուած էին, որպէսզի ծածկամտութեամբ և սրամտութեամբ չի համարձակէին միտք մը արտայայտել և ժողովուրդը պղտորել:

Յիշենք անցողակի նախկին Երիտասարդ թուրքերի պետերէն միտյն Ջիա-Բէյի մէկ դիւանին մի մասը որուն չուկեան էր Մուսթան-Ազիզ:

*Մարդկային ազգն յարգանք ունի յաւետ
նորա անունին,
Որ իր անձը մատաղ կ'ընէ օգնութեան
իր նմանին:*
*Երկրիս երեսն անգթութեամբ ողողող
անգութներին
Հողին ներքև իրենց վիճակ, Աստուած
չի՞ գար մտքերնին:
Կամ եղածով կը հերիքնան, կամ կ'ենթարկուին
կաշառքին
Այժմու ատենս յարմարցնողը ծախքերնին
իրենց մուտքին:
Հիմակուան բշուառներին ո՛վ որ ականջ
տայ դատին
Ողորմիս կարողայ հոգուց փարաօնին
Շէղդողին:*

Ուրիշ շատերէն յիշենք մին. Դէյի Բիզա, որ համարձակ խօսեալուն համար այս անունին արժանացած էր, և իսկապէս պէտք էր ոչ թէ Դէյի, այլ Վէյի Բիզա կոչուէր:

Ահաւասիկ իր մէկ յարձակողականը որ թուրքերէն հիքվեթէ կըսուի.

*Դարդի կը հանդիպի ով որ հավատարմութեամբ
կը ծառայէ այս երկրին և ազգին
Շիտակութիւնը պարզապէս*

*դիւահարութեան պէս մի բան է
Հազարներով գողցողները պաշտօնների վրայ
բարձր ի գլուխ կը տնքան,
Մի բանի դուրուշի զիջողների վարձը
բիարանն է:*

Այս տողերն Ազիզի ականջն հասնելով, Ջիա-Բէյ շունչը Լօսնուսն առաւ և հոն հրատարակեց իր թերթը «Մուխրիք» (Ազգարար) ՅՕական թուականներին, որուն թիւերը ձեռքէ ձեռք խլուելով անյազօրէն կը լափէին համախոհները: Ի վերջոյ Ջիա-Բէյ ներման արժանանալով Պօլիս եկաւ և բերնին քիչ մը շաքար քսուելով՝ նախ Ամասիոյ կառավարիչ և ապա Աղանայի կուսակալ Էդալ Ջիա-փաշա և հոն վախճանեցաւ:

Այստեղ ի հարկ մեր նպատակէն դուրս է Ջիա-փաշայի կենսագրականը գրել, բայց մենք առիթ համարեցինք մի բանի տողեր յատկացնել, ցոյց տալու համար նախկին Երիտասարդ թուրքերի մտածելակերպը և այժմու սրիկաների գործելակերպը:

Փակէնք այս էջը և շարունակենք մեր դասախօսութիւնը:
Թէ հայերը կառավարական պաշտօններու մէջ ի՞նչ դիրք բռնած էին, աւասիկ փոքրիկ օրինակ մը ցոյց տամ փաստացի և կարկառուն:

Էօթանասնական թուականներին նմը:
Սաղրազամ Մահմուդ Նեղիմ-փաշա, պետական ո՛ր պաշտօնատան դիմում ընէր եռն ուր հայեր կային, իսկոյն պատասխան կ'ստանար, բացառութիւն էր միայն Մալիյէ Նեզարէթին՝ պետութեան կամուկան նախարարութիւնը, ուսկից պատասխան ստանալը, իր խօսքով, Կայսրէ արցունք սպասելու համանիշ էր:

Մի առաւօտ, Սաղարէթ չի գնացած ուղղակի Մալիզը կը գնայ, կը տեսնէ որ շուրջ 300 քեաթիպներէն ոչ ոք չէ տակաւին շնորհ բերած: Մի բանի ժամ սպասելէ յետոյ, վերջապէս լեզուին ծայրը կ'սկսի, կէս օրին մօտիկ: Դիւանապետները դողդողալով կուգան ներկայանալ իրենց ակնածութեան հաւաստիքը մատուցանել գետնամած: Սաղրազամը բարական փառաւոր յանդիմանութենէ յետոյ կը հրամայէ առաւօտները արևածագէն երկու ժամ վերջը, իսկ երեկոները արևամուտէն երկու ժամ առաջ մնկնել և գործերը շատ կանոնաւոր կերպով վարել և տեղի ունեցած հարցումներուն իսկոյն պատասխան տալ, այլապէս, կը յարէ՝ Ձեր ամենուղ տեղը 20 հայ երիտասարդներ կը բերեն և ձեզ ճամբու կը դնեն, կ'ըսէ և կը մեկնի: Կը հետևի որ Սաղրազամը վատահ էր որ 300 թիւրք պաշտօնէից ըրածը 20 հայ երիտասարդներ կարող էին լիտի կատարել և գոհացնել:

Նոր այս տարի յետցի որ Միիրան Քարաքաշ՝ նախարարութեան

խորհրդական և Սերովբե Պրպլերեան՝ հաշուակալութեան տնօրէն կարգուած են և կը շարունակեն իրենց պաշտօնն ամենայն աչալիքութեամբ և ձեռնհասօրէն:

Այս սողերը գրած միջոցիս 1907ի Ս. Փրկչեան ընդարձակ օրացոյցն ունիմ սեղանիս վրայ:

Թղթատե նր փոքր ինչ և բանանք «Օսմանեան տէրութեան հայ պաշտօնեաներ» գլուխը:

Անձնական գանձուց նախարար Յովհաննէս Սարգս, պալատան քարգմանիչ Համայեակ Սէֆերեան, կալուածոց դիւանի տնօրէն Յակոբ Եհնճեան, քարգմանիչ Արամ Ասիլ, երկրագործական քննիչ Գէորգ Թորգոմեան: Համարակալութեան քարտուղարներ Մահակ Երամեան, Լևոն Փափագեան, քարտուղար կալուածոց դիւանի Արամ Խորտաճեան, ճարտարապետներ Տիգրան [Եհիպերեան], Գէորգ Յովսէփ [Թագուրեան], Գրիգոր Թագուրեան:

Պետական խորհուրդ
Արրահամ-փաշա Երամեան
Տիրան Տատեան
Անուոն Քեօսեան
Պետրոս Չէքի
Չարեհ Տիպեր
Գրիգոր տրեան
Յովհաննէս Նուրեան
Հրանտ Ասատուր

Ներքին գործոց նախարարութիւն
Միսակ Ֆերիտ,
Մինաս Կանսար,
Լևոն Սուրենեան,
Յարութիւն Խանտանեան:

Կուսակալի օգնականներ
Վանայ՝ Յովհաննէս Ֆերիտ
Խարբութի՝ Յովհաննէս Ասասեան
ինչպէս երբեմն Մարկոս Աղաբէկեան, Մկրտիչ Աղաթօն ևն:

Կառավարչի օգնականներ
Անասիոյ՝ Նազարէք Էֆենտի
Կեսարիոյ՝ Ղազարոս Էֆենտի
Բրեվեզայի Յակոբ Էֆենտի
Փոխ-կառավարիչներ

Միւրեֆթի՝ Միւրան Պոյաճեան
Էնուսի՝ Յարութիւն Արարդեան
Դարիտի՝ Լևոն Էֆենտի

Փոխ-կառավարիչի օգնականներ թուով 19 հոգի:

Նահանգային քարգմաններ
Բրոսա, Ասանա, Կարին՝ 3 հոգի:

Ոստիկանութեան նախարարութեան մէջ՝
բժիշկ Տիգրան Էֆենտի
գօմիսէր և քարգմանիչ
Պետրոս Աղաջի
[Ա. Ղեղագործ կեդրոնական բանտին՝
Խաչիկ Փիտեան:

Արտաքին գործոց նախարարութեան մէջ՝
Իրաւագէտ խորհրդական և ապա նախարար Դարբիւլ
Էֆենտի Նորաստունկեան
Օգնականներ
Հրանտ Ապրօ,
Նշան Երամեան,
Պօղոս Քլքլստեան,
Մագսուտ Սէֆերեան
Օտար թղթակցութեանց դիւանի պետ՝
Միւրդատ Էֆենտի Պապաեան
Նախարարի օգնական Իլիաս Էֆենտի Չայեան
օգնական Ռուբին Էֆենտի
քարտուղար Տիգրան Դեմիրճեան
Առաջին արձանագրիչ
Պետրոս Պրպլերեան. ևն ևն ևն:

Այնպէս որ արտաքին գործոց նախարարութիւնն, որ գլխաւորապէս հայոցմէ կը բաղկանար, պետութեան առաջնակարգ և կանոնաւոր մէկ պաշտօնէութիւնն ևլաւ առաջին օրէն իսկ:

Ծովակալութեան պաշտօնատան մէջ՝ Առաջին քարգման
Վարդան-փաշա,
Գիսակ Թորոս Բէլ

Թղթակցութեան դիւանի պետ
Չէնոր Էլմուսին ևն ևն:

Դիւանագիտական մարմնոյ մէջ՝ Հռովմի դեսպան
Մարգիս Էֆենտի Համամճեան

Լա Հի դեսպան
Յովսէփ Էֆենտի Միսաք

Բրիտանացի դեսպանատան խորհրդական
Միհրան Էֆենտի Քավաճեան

Պարիզի դեսպանատան քարտուղար
Տիրան Բէյ Նորատուն-Կեան
Լեոն Բէյ Երամեան
Տիգրան Բէյ Չայեան

Ընդհանուր հիւպատոսներ 2 հայեր
Հիւպատոսներ 4 հայեր
Փոխ հիւպատոսներ 3 հայեր

Սպարապետութեան դուռ՝
առաջին քարգման և քղթակցութեան դիւանի պետ
Միքայէլ Էֆենտի Մամիկոնեան
օգնական

Միհրան Արիկեան
առողջապահական ճիղի տնօրէնի օգնական
Գարրիէլ Բէյ Թաշճեան
առողջապահական ճիղի քննիչ յանձնաժողովի անդամ
Աղեքսանդր Բէյ Արարեան

Գուլէլիի զինուորական վարժարան՝
Ֆրանսերէնի ուսուցիչներ Սրապիոն Թղլեան
Պօղոս Զէրեսաւճեան

Դատական նախարարութիւն՝
Վահան Էֆենտի
խորհրդական Կարապետ Էֆենտի Շահբազ
Վերաքննիչ ատեանի նախագահ
Յովհաննէս Սուրէնեան
Անդամներ այլ և այլ ճիղերի
Տիգրան Երասուֆեան
Թազուր Համամճեան

Գարրիէլ Գարրիէլեան
Յովհաննէս Թորոսեան Ձէքի
Մարգար Ունճեան

քիւրդի ընդհանուր դատախազ
Թադլոս Բլֆքի
դատական քննիչներ և քննիչներու օգնականներ ևն ևն:

Հանրային պարտուց (Dette publique) վարչութեան մէջ իբրև
խորհրդական, իբրև քարգման և իբրև հաշուապահ և քարտուղար
նշանաւոր եղան Միշէլ Էֆենտի Մըսրըլը, Կարապետ Սուրէնեան,
Միքայէլ Մինասեան, Վահան Էֆենտի Աղաթօն, Լեոն Տէմիրճիպաշեան,
Յակոբ Ինճեան, Ազնաուրեան, Գըրրքճեան, Պետրոս Հալաճեան, Պօ-
ղոս Հաճեան, Յակոբ Ազիլեան, Արայ Արապեան, Թովմաս Թովմա-
սեան, Գրիգոր Հիւրմիզեան ևն ևն, թուով 79:

Հանրօգուտ շինութեանց նախարարութիւն՝
նախարար Գարրիէլ Էֆենտի Նորասաունկեան
և յաջորդ Պետրոս Էֆենտի Հալաճեան
մասնագէտ խորհրդական
Գարրիէլ Էֆենտի Սերվիչէն:

Երկաթուղեաց կեդրոն՝ կօմիսեր
Արամ Մարկոսեան
Գէորգ Ասլանեան
իրաւագէտ խորհրդականի օգնականներ՝
Պետրոս Էֆենտի Խօրասանճեան
Յովհաննէս Գարսաշեան

Ա. գծագրիչներ
Գրիգոր Մանուկեան
Տաճառ Էֆենտի [Բարազեան] ևն ևն:

Կրթական նախարարութեան (Մեռիֆ նեպալէքի)
Գրիգոր Էֆենդի Ոսկեան
Միքայէլ Աշճեան

Կայսեր. համալսարանի ուսողութեան ուսուցիչ
Յովսէփ Էֆենտի Երասուֆեան

Միքիէի ուսուցիչներ՝ Յովհաննէս Հիսարեան, Թովմաս Թեր-
զեան, Նշան Դուլասեան, Տիրան Զէլիկեան, Դաւիթ Չրաճեան, Մատ-
թէոս Եկենեան:

Գեղարուեստից վարժարանի անօրէն և քանդակագործութեան ուսուցիչ Երուանդ ԼՖԼճաի Ոսկան

Կայսերական լիտի ուսուցիչներ Թովմաս Թերզեան, Յարութիւն Յովհաննէսեան, Սեպուհ Թապիպեան ևն:

Այս բոլորը շատ երկար պիտի լինէր, ուստի զանց կ'ընենք, և սա կէտը կ'ընգծենք որ Թորքիա ուր որ պաշտօնատուն մը ունեցած էր, հոն հայուն ներկայութիւնն և առաջնակարգ դերի մը գրաւելը ակնարարօրէն էր:

Անցեալ դարու կէսէն այս կողմ հայ ցեղը նշանաւոր աշակերտներ տուաւ Իպօկրատի, որոց մէջ իրաւամբ փայլեցան Պլզան Բէյ, Սէրպիլէն, Խօրասանճեան, Քեաթիպեան, Փէշիմալճեան, Խանտանեան, Թիրեաթեան ևն ևն:

Նոյնպէս վերև նշանակեալ տարեցոյցին մէջ ի Պօլիս և ի գաւառս նշանակուած են վկայեալ 121 բժիշկներ, որոց անուանիներն են՝ Աճեմեան Տիգրան, Այվազեան, Արապեան, Բարազեան, Գափամաճեան, Գըլտճեան, Չարդարեան, Էօմլերեան, Թիւրապեան, Թորգոմեան, Իփիճեան, Խնդմիրեան, Կիլիպէնկեան, Չեշուլեան, Ճէրանեան, Մաաթեանեան, Մինճեան, Մութաֆեան, Յակոբեան, Նաքաշեան, Շահպազեան, Պապաեան, Սեդրոսեան, Տատուրեան, Օրմանեան, Քրիսեան, Տաղարեան ևն:

Վկայեալ դեղագործներ բոլով 95 անձինք, որոց անուանիներն են՝ Ալլահվէրտեան, Արսլանեան, Աշճեան, Բարաղամեան, Գալէմքեաթեան, Գօլանջեան, Թումասեան ևն ևն:

Հայ փաստարաններ ի Պօլիս և ի գաւառս բոլով 70, որոց գլխաւորներն են՝ Մերեմ-Գուլի, Ասասեան, Հրանտ Ասատուր, Գազանճեան, Գայսերլեան, Գույումճեան, Չօիրապ Գրիգոր, Թրնկըր Սիմոն, Խաչերեան, Խոսրովեան, Խօրասանճեան, Վառձապուհ Մանուկեան, Յովհաննէս Մօստիչեան, Յակոբեան, Նարլեան, Յակոբ Պահրլ, Գասպար Չերազ, Սմբատ Քեաթիպեան ևն ևն:

Քանդակագործներ և փորագրիչներ բոլով 14. յորոց Սլրաիչ Պլնաերեան աղամանդի վրայ փորագրող և որ երոպական հռչակ ստացաւ, Ոսկան Երուանդ, Ա. քանդակագործ և օսմանեան Միզլի փոխ անօրէն, Սլրոտիչ Գալֆաեան, Տէօքմէճեան, Քիւչիւքեան ևն:

Հայ նկարիչներ, որոց գլխաւորներն եղան Պլեհատումեան, Ակայեան, Ասլանեան, Եազըճեան, Յակոբեան, Սիրումեան, Ֆէքվաճեան, Չոլխաճեան ևն ևն:

Ճարտարապետներ բոլով 38, որոց գլխաւորներն եղան Ազնաուր, Անանեան, Աւետիսեան, Գազազեան, Քալֆաեան, Էրսէրճեան, Թազուրեան, Թաքաճեան, Թրնկըրեան, Կիւրեղեան, Մերամէրճեան Չեմոք Բէյ, Պալապեան, Պեսարոս Նուրեան, Արամ Ֆէքվաճեան ևն ևն բացի նշանաւոր Պալեանները:

Երաժշտագէտներ՝ Տիգրան Չոլխաճեան, Ալեքսանեան, Խօրասանճեան, Մարտիւրեան, Սիմանեան ևն ևն:

Թորքիոյ մամուլը ի Պօլիս

10 թերթ օսմաներէն

7 թերթ յունարէն

4 թերթ ֆրանս-անգղիերէն

2 թերթ հրեական

1 թերթ սերպերէն

խսկ 14 թերթ հայերէն:

Այս բոլորը դեռ շատ կ'երկարէր, եթէ ատելի մանրամասնէինք, ուստի կը փակենք:

«Հայոց դերը Թորքիոյ մէջ» ասիկայ վեր ի վերոյ ուրսուն տարրուան պատմութեան մը հակիրճ ուրուանկարն է, գոր վորճեցինք նկարագրել տարտղնած, խառն. ափյափոյ և վարկաբարազի, աստղծ մ'է գոր առիմք և որ կարելի է ընդարձակել զայն շատ և շատ:

Թէ ի՞նչու այս պատուական և արդիւնաբեր ցեղը իր հայրենի երկրէն վտարուեցաւ, կողոպտուեցաւ և ջարդուեցաւ, աւասիկ մի քանի բառով պիտի ջանամ այդ ի՞նչուին պատասխանել:

Գիտենք որ Թորքիոյ խանձարուրը Փոքր Ասիոյ մէջ էր, նախկին Փոիգիոյ, Դոռնյոճօնի (Էսկիշէհիրի) մէջ, և թէպէտ Բալկանեան թերակղզի ձեռք անցուցել էր, բայց չէր տիրապետած, այլ բանակ դրած էր (Empire), և հետզհետէ Սէրվիա, Մօնաւնէկո, Ռումանիա, Հէլլադա, Բուլկարիա ձեռքէ հանելով՝ մնացել էր Անադօլու՝ Թորքիոյ գոյութեան միակ երակը:

1878ին երբ Ռուսաց յաղթական բանակը Նիկոլա Մեծ դուքսի դեկավարութեամբ Պօլսոյ դուռն հասել էր յԱյաստէֆանօ հաշտութեան նախաշաւտիդն ստորագրելու համար, Նիկոլա Մեծ դուքսը մէջտեղ դրաւ 16րդ յօդուածը, այն ատենի Թրքաց արտաքին գործոց նախարարը Սաֆֆէթ-փաշա՝ «Ձեռքերս կը կտրեմ և Հայոց մասին որևէ յօդուած չեմ կրնար ստորագրել»- ըսած էր, բայց ի վերջոյ Աղէքսանդր Բ. ձարին պնդումին վրայ ըսին թէ արտաստելով ստորագրած էր 16րդ յօդուածը:

Սակայն Արիտանի հրեաժողովը նախարարապետ նոդկալին լորդ Բիքոնս-ֆիլդ (Բլենհամլեն դ'Իսթրայլի) Բերլինի Արիտապագուին տարա մեր պատուական դասը և ջուրը ձգեց: Սորա համար է որ անգղիացիք մեզի հանդեպ պատասխանատու են, ինչպես որ իրենք ալ կը խօսուովանին:

Հարցը մեր դատին միայն չուրն իյնալը չէր, արդէն հոգելոյս Արտիչ Խրիմեանի պատրիարքութեան առաջին օրէն Դուռն սկսաւ ընդ ակամբ հայել Հայոց ամեն շարժումներուն և խոշորացոյցով դիտել մեր ամեն քայլերն, և երբ ճիշտ յօդուածն ալ վրայ հասաւ, քիտքերն սկսան ծուռ աչքով նայել մեր վրայ, և յետ այնորիկ մեր անհաշիւ անտակաւ և անիմաստ շարժումներն ևս աւելի քրքաց ծուռ հայեցողութեանց հաստատում և նուիրագործում տուին: Հոս անողը չէ անշուշտ մանրամասնութեանց մէջ մտնել, բայց մենք դիւանագիտական գործերու մէջ խակ էինք, և կարծեցինք թէ մեր մանր մունր ասեղի և ատրճանակի հարուածներով պիտի հարկադրէինք հսկայ պետութիւն մը որ բարե-նորոգումներ գործադրէր, ևս կամ երոպական միջամտութիւն մը առաջ պիտի բերէինք:

Վրայ եկաւ 1890ի պատրիարքարանի ցոյցը կայսերական Թուրքան ուրի տակ առնելով և պատռելով, ինչ որ մեծ ցոյց և նախա-տինք էր կառավարութեան ընդդէմ:

Մորան յաջորդեցին Փոքր Ասիոյ բազմաթուրք քաղաքների մէջ, ինչպէս Էօզղատ, Միրզեֆուն, Գաղասիա ևն մեր ցոյցերը: Եկաւ 93ի Սասունի անկազմ, անպատրաստ և անխորհուրդ մեր ապստամբու-թիւնը, մարդիկը ուրի հանեցինք և յետ քաշուեցանք, իրենց ճակա-տագրին թողով: Գալուորիկ և Կլիւիկիւզան քաջութեան հրաշքներ գործեցին և մանաւանդ իր անառիկ դիրքին շնորհիւ բաւական դիմադրեց հազիւ 150-200 ռազմիկներով, որուն գլուխն էր Անդրանիկ, որ ի վերջոյ ի գուր 8.000 հայեր կորսնցնել տուաւ մեզ: Եւրոպա քիչ մը յուզուեցաւ, որպէս թէ քննիչներ գնացին քննեցին, և խնդիրը մարեցաւ: Վասն զի Վիլիելմ հեռագրել էր Սուլթանին՝ ապստամբութիւնը դեռ չի ծաւալած, իսկոյն խեղդել:

95ին Խաչվերացի տօնին դարձեալ Պօլսոյ մէջ ցոյցեր անդի ունեցան Պապը Ալիի դէմ, մայիս 11ի մեծօրանդումն ի ձեռքին, նոյն գիշերը բանտին մէջ ձերբակալուած հայեր 120ի մօտ շնչահեղձ եղան:

Արդարև սրտառու էր հիւանդներէն միոյն հաղորդութիւն առած միջոցին քահանային այն հարցումը թէ «Տէր տէր, հոգաւ մատաղ Ինկիլիզի տօնանման Պօլիս մտա՛ւ»: Մերոնց այսպէս հաւատացուցեր էին յեղափոխականները իբր թէ եթէ Պօլսում 2-300 հայեր կոտորուէին, անգղիական նաւատորմը շոգիի վրայ էր արդէն և իսկոյն պիտի մտնէր:

Եղու՛ կ' միամտութեանս...

Սմա յաջորդեց Չէթունի ապստամբութիւնը: Չէթուն 5 անգամ

ապստամբել էր Դրան դէմ, և Ազիզ-փաշայի, Խուրշիդ-փաշայի 20-25 հազարոց բանակները ի փախուստ դարձուցել էր, կարևոր մասը կոտորելով, այնպիսի զի օսմանեան բանակի մէջ մասնատրապէս և շրջակայ ժողովուրդին մէջ ընդհանրապէս խուճապ առաջ բերել էր, և Թուրքիոյ երկրորդ Մօստէնէկոսն եղած էր: Այս անգամ ևս Արդուլահ փաշայի 30.000ոց բանակը կորաբամակ պարսուկ էր, մերոնցմէ ևս 1.800 հոգի սպաննուելով: Դուռն իսկոյն Էտեմ-փաշան դրկեց և խաղաղեցուց, որ ի վերջոյ Բեդմապիի հերոսը պիտի լինէր: Չէթունի յետնալ ատրքերը բաշխուեցան և քրիստոնէա (մի յոյն) գայմագամ նստաւ Չէթունի, խաղաղութիւն եղաւ, և Աւօ շունշը Լօնտօն առաւ իր տքնութեանց դափնիներուն ներքև պառկելու:

Այս միջոցին էր որ Տատեան Յարութիւն-փաշա, որ Համիդի մեծ վասախորեան արժանացել էր, երես անկեալ կայսեր ուրիցը փարելով պարտաւեցաւ, որ Հայոց բարեկարգումներն սկսելին և այս հաւատարիմ ժողովուրդը ուրի տակ չընկնէր: Համիդ ի հուր բորբոքելով երկու շառաչուն ապտակ զարկաւ Տատեանի, որ իսկոյն առ անդեան ուշքէ զնաց: Բայց Համիդ զոչալով իր քրածին և Տատեանի անկեղծ հայրենա-սիրութեանը՝ հրամայեց քիչ աշխատիլ և ամսական ռոճիկը 300էն 500 ոսկիի բարձրացուց: Համիդ գոռացել էր՝ «Ես Վիլիելմի նման բարեկամ ունիմ, աշխարհքումս ուսկի՞ց կը վախտմ»:

Այս միջոցին էր որ Դաշնակցութիւն կոչուած կուսակցութիւնը նոր կազմուել էր: Ի՛նչ պատուական հայրենասէր և անձնադիր երիտա-սարդներ կային անոնց մէջ: Ուզելով մեծ ցոյց մը սարքել պոռնիկ և շահաճող Եւրոպայի ուշադրութիւնը դէպի Հայկական հարցը դարձնելու համար, որոշեցին Պապը Ալին ուժանակով օդն հանել, բայց որովհետև թողքերուն ոմանց շնորհիւ գործը ոստիկանութեան ականջն հասել էր, ոստիկանութիւնը դեռ չէր Խաչվերացի միջոցաւ հսկողութիւնն ևս քան զևս խտացուց, և 96ի օգոստոս 16ին, երբ ցոյցը վիժելուն վրայ էր, Դաշնակցութիւնը խորհեցաւ օսմանեան դրամատուրը գրաւել, իբրև պատմել հոն ապստամբելով և շէնքին սպառնալով, որ թէպէտ անուանը տաճկական, բայց իրապէս երոպական, մանաւանդ անգղիական և ֆրանսական էր:

Բանքան շրջապատող զինուորներէն 60 հոգիի չափ սպաննուել էին վերէն նետուած ուժանակներէն, իսկ դուրսը առաքինի կարիճ հայեր մի քանի ժամուան մէջ փողոցներում նախապէս պատրաստուած խուճանի ձեռք 6.000 հոգի կոտորուեցան:

Վեց պետութեանց դեսպանները իսկոյն Երլարզ համիմաստ ծանուցագիր մը դրկեցին սպառնալով որ «անձը և տինասախաղ վտանգի մէջ է, եթէ իսկոյն ևեք կոտորածը չի դադրեցնես»:

Միևնոյն ժամանակ Ռուսաց դեսպանատան առաջին գործա-

կատար Մարսիմոֆ՝ դրամատան առջև ծնկաչոք ամենայն Ռուսաստանեայց կայսեր և կայսրուհույն անունով կ'երդնուր և կ'աղերսեր որ անձնատուր լինին, և թէ իրենց անձին ամեն ապահովութիւն, և Հայկական հարցը ի նկատի առնուիլը խոստանալով: Հոն ապաստանող կուսակցութեան անձնադիրները Պօլսէն պահակներով շոգենաւ դրուեցան Մարսիլոյ համար:

Այս այն Մարսիմոֆն էր, որ շոգենաւ գնալով հրամանատարին պատուիրել էր որ արթուն հսկողութիւն ընէր, այս հայրենասէր մարտիւր մարդիկը «սրիկայ անիշխանականներ» որակելով:

Բայց ի պատիւ Գաշնակցութեան մարտիւր անդամներուն պէտք է անկցնել, որ ցոյցին հետեւեալ օրն իսկ դրամատան տնօրէնը պաշտօնապէս յայտարարեց լրագիրներով, որ բանքին սնուկները բարոյովին բաց եւ լիք ըլլալով հանդերձ հայ յողափոխականները և ոչ իսկ ոսկիի ձեռք չէին դպցուցած:

Սակայն սատանամիտ Համիդ, լաւ հասկանալով մեծ կոչուած վեց պետութեանց լոկ խորհրդատու և պղատունական դիրքը, և միևնոյն ատեն Հայկական հարցը մէջ տեղէն վերցնելու համար հայերը մէջ տեղէն վերցնելու դժոխսային գաղափարն յղանալով՝ բոլոր հայաբնակ մահանգաց կուսակալներուն շրջաբերական հրահանգ տուաւ իր այս անիծեալ դիտաւորութիւնն ի գլուխ հանելու: Ի պատիւ և ի յարգանս իւր յիշատակին պէտք է անկցնել որ Համիդի անձնական Ա. քարտուղար Սիրուշիա-փաշա իր այս շրջաբերականը խմբագրել դժկամակելուն և միայն յանցատրներն ոչ որ են՝ պատժելու դիտողութիւն զրաձ ըլլալուն համար թունաւորուեցաւ և երեք օրէն վախճանեցաւ, ինչպէս նաև փաշային բժիշկը՝ ազնիւ Տիգրան-փաշա Փէշտիմալճեան, որ նոր պալատին բժիշկ կարգուած էր, գաղտնիքը դուրս չ'ելնելու համար:

Այլ այսուհետև սկսաւ Հայոց մարտիրոսագրութիւնը՝ խմբական կոտորածներ, չարաչար բանդարկութիւններ, ժողովուրդը աղքատացնել, զանազան պատրուակներով սարսում և սոսկում ազդել ևն ևն, ոսկից հայութիւնը սուտեց 300.000 հոգի: Երբ և եկը, մէկ քաղաքէ ուրիշ քաղաք գնալը բոլորովին խափանուեցաւ, այնպէս զի Հայաստան երկիր դրախտավայրը, դարձաւ Հայաստան երկիր դժոխսավայր:

Եւ այս կեանքը, եթէ կարելի է կեանք կոչել, շարունակուեցաւ տասներկու տարի, մինչև 1908 թուականը, երբ Թուրքիոյ ներքին յեղափոխութիւնը ծագելով՝ Համիդ գահէն վար առնուեցաւ և իրեն յաջորդեց եղբայրը՝ թոյլ, մեղկ և զինարթու Սուլթան-Մեհմետ Ռէշաա, որ պարզապէս հլու և անխօս գործիք մ'էր Ժեօն-թիւրքերու ձեռքին:

Թուրքիոյ բոլոր ժողովուրդը մեծ ցնծութեան մէջ էին Օսմանեան սահմանադրութեան վերադարձը ողջունելով: Թուրքերը արտաստաբար կը համբուրէին հայերը. «Դուք մեր վարժապետներն էք, և այս ազա-

տութիւնն արդիւնք է ձեր անհատանում գոհողութեանց» - բսելով: Ի բաց առեալ յոյները, որք միշտ վերապահութեամբ կը շարժէին և անլի խելօք էին:

Հազիւ տարի մը անցել էր, և մեր ուրախութիւնը մեր վտորը մնաց, և 1909ին Աղանայի կոտորածն առաջ եկաւ ամենառոյնչ պատճառաւ. որուն շնորհիւ 25.000 հայեր կոտորուեցան:

Աշխարհի երկու մեծագոյն թերթերը՝ «Թայմս» և «Թան», փոխանակ ապտակ մը խփելու Թուրքիային, խորհուրդ տուին Հայոց հաշտուիլ իրողութեանց հետ. այս խօսքերն ի հարկէ ամենէն առաջ Ժեօն-թիւրքերը կ'իմանային:

Սոցա առած խոստումները և խաբէութիւնները և կեղծիքները, Յուդայի համբոյրները վերջ չ'ունէին, և հուսկ ապա մեր միամիտ կուսակցականները յայտարարեցին, որ խարուած էին Մահմուտ շէվրէթերը, Էնվերները, Մեհմեդ թիզաները, ճեվղէթները և քալէաթները:

Մեր փորձառու և խելահաս պապեր կրտէին թէ օսմանցին սալով մապաստակի որսի կ'երթայ և ահա հազար մէկերորդ անգամ լինելով հաստասուտեցաւ դժբախտարար այս առակ:

Եւ չեմ ամբաստաներ այլ կը պատմեմ, և պատմագիրը պէտք է որ անկեղծութիւն և առանց այս կամ այն կողմ թերութիւն ճշմարտութիւնը գրէ, իրողութիւնը մէջտեղ դնէ դատաստանը ժողովուրդին կը պատկանի:

Մինչ այս մինչ այն, բայց վերջապէս վրայ հասաւ Կ.Պօլսոյ Ռուսաց կայսերական դեսպանատան առաջին թարգման Պ.Մանուէլշտամի ձեռք մշակուած Հայաստանի մէջ մտցուելիք բարենորոգմանց նախագիծը, որ կազմուելու էր միայն մի մահանգ վեց վիլայէթներէ բաղկացեալ, այն է Էրզրում, Վան, Բիթլիս, Տիարպէթիք, Ռաբբիդ, Սիվաս:

Բայց կեղծաւոր Գերմանիա որ լուր կեցած էր Հէրսէր-Բօսնայի Աւստրիայէ գրաւման, և Բուլկարիոյ թագաւորութիւն հրատարակելուն, պարզ հանդիսատես եղած էր Իսապիոյ կողմ, Թարաբլուսի գրաւման, որ մատներու մէջով դիտած էր թուրքաց Բայրանեան պատերազմին մէջ խայտառակօրէն պարտութեան և թշնամոյն մինչև Չաթալճա հասնելուն, Պօլսոյ դրներուն մօտիկ յանկարծ խելքը սուռն եկաւ և Հայկական հարցին մէջ թիքը խօթելով՝ վեց վիլայէթին վրայ Տրապիզոնն ալ անկցուց, բայց մէկ մահանգը երկուքի վերածելով, որպէս զի հայերը ոչ մի տեղ մեծամասնութիւն չի կազմէին:

Եւ ահա վրայ հասաւ այս աշխարհաւոր տիեզերասասան աննախընթաց երկայ պատերազմը:

Սոյն պատերազմին մէջ Օսմանին և Տետոնին երկուցունց հակընդդէմ շահերը զիրար խաչաձևեցին: Նախ, եթէ Ռուսը Հայաստան արշաւէր հայերը բնականաբար Ռուսաց կողմը պիտի բռնէին, յետոյ՝ եթէ

թուրքը յաղթուր, հայը արհամարհելի ոյժ մը չ'պիտի լինէր այլևս, իսկ եթէ Տևտոնը յաղթէր՝ Համբուրգ-Բաղդադի գիծին երկայնքը հայոցմէ պետք էր որ մաքրուէր, ուստի մէկ միջոց կար՝ այս «վնասակար տարրը» անճիտել, աարագրել, կոտորել: Եւ այս դժոխսային ուրուագիծը գործադրուեցաւ ներկայ 20րդ դարու 15րդ տարին՝ ապրիլէն սկսեալ, և երկու միլիօն հայերէն մէկ միլիօնը չարաչար կոտորելով բարբարոս քիւրքերու միջոցաւ և զագան Գերմանիոյ մեղսակցութեամբ: Ահաւասիկ շրջաբերական հեռագիրը:

ԷՆՎԷՐԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՅԵՐԸ ՋԱՐԳԵԼՈՒ

Ներկայ վիճակին պահանջումով հայ ցեղին ամբողջովին փճացման համար կայտերական իրատւ, եղած է: Անոնց մասին յետագայ կերպով գործողութիւն պիտի ըլլայ.

1. Օսմ. կայսրութեան հպատակներուն մէջ գտնուող հայ և հայ անուն կրող ամեն քաղաքային անձերը՝ միմիայն վեց տարեկանէ վար աղայք բացառութիւն կազմելով՝ քաղաքէ դուրս հանելով՝ սպաննել:

2. Կայս. բանակներու մէջ գործող բոլոր հայ զինուորները, ո՛ր և է, դէպքի տեղի չի տալու պայմանով, իրենց պատկանած կեդրոնէն անջատելով, առանց ժողովրդին զգացնելու, զաղանի կերպով հրացանի բռնել:

3. Բանակին մէջ գտնուող հայ սպաները իրենց պատկանած բանակատեղիին մէջ ցնոր տնօրինութիւն բանտարկուած պահել:

Այս երեք յօդուածները յուրաքանչիւր բանակի հրամանատարներու հաղորդուելէն 48 ժամ ետք գործադրելուն համար առանձին հրաման պիտի տրուի. ատկէ առաջ հարկ եղած նախապատրաստութիւններէ զատ ո՛ր և է գործողութիւն չ'պիտի ըլլայ:

Ընդհանուր հրամանատարի փոխանորդ
և պատերազմ. նախարար

Էնվեր

1303 շուպաք 23

1915 փետրվար 23

Սկիզբ՝ 15 ապրիլ

Գերմանիոյ մեղսակցութեամբ ըսինք: Այո՛, վասն զի եթէ անիծեալ թուրքին պարզապէս մատով նշան մ'ընէր, իսկոյն ևեթ թուրքը կը դադրեցնէր կոտորածը, Գերմանիա չ'ըրաւ այս, ինչպէս ընդհակառակն Չարն ըրաւ 97ի հեյլէն-թուք պատերազմի միջոցին իր գործակալներու ներկայութեամբ և դրոմամբ այնպիսի խժոժութիւններ կատարուեցան մանուկներու, աղջիկներու, հարսերու, կիներու, պառաւներու, պարմաններու և ծերերու վրայ, որոց մմանը արեգակը տակաւին չ'ը տեսած, և այս՝ քրիստոնէա կոչուած և Աստուած իրեն դաշնակից համարող բարբարոս Գերմանիոյ և անոր զուխ Վիլիլմ Բ.ի ղեկավարութեամբ խժոժութիւններ, չարչարանքներ, կոտորածներ և արեւումներ, գորս մարդկային լեզուն չէ կարող նկարագրել... Գիտէք արդէն:

ԵՉՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Տաճկահայոց աղէտը՝ թէպէտ ահաւելի, թէպէտ անպարագրելի և անբացատրելի է, սակայն ներկայ աշխարհաւեր պատերազմը կըր վախճան գտնէ լրիւ և հայուն վիճակը որոշուի, իմ չարքաշ. առկուն, աշխատող և արդիւնաւորող ցեղակիցս կըր քիչ մը հանգիստ շունչ քաշէ և ամփոփուի, 30-40 տարուան միջոցի մէջ կարող է վայլուն դիրքի մը տիրանալ, եթէ նեղ կուսակցական ճղճիմ ձգտումները դադրին, և ծալլենք դարակը դնենք առայժմ անբչական նշանաբաններ, յօճան հասնելով հայութեան մեր տուայտող, տառապող բնկորներուն:

Լսեցէք, լսեցէք, ականց դրէք ահուելի աղաղակին, որ դժոխքի ամբակուր դոները խորսակելով դուրս կը ժայթթէ:

Ի՞նչ աղաղակ է այդ, վրէժխնդրութեան չաստուածուիւոյն Նեմլսիսի աղաղակն է այն. դաշտ և անդ, ծառ և ճիւղ, ձորն ու ծործոր, քար ու մացառ ամենքն մէկ աղաղակ ունին միարերան, և այդ աղաղակն է՝ վրէժ, միշտ և հանապազ վրէժ, զի արաբական առածը կ'ըսէ.

Որ իր հօրը մահուան վրրէժ չի լուծէ,

Նա անպայման հօրն հարսագառ գտակ չէ:

Բայց ի՞նչպէս պիտի լուծենք այդ վրւ.ժը. աւասիկ հոս է մեր մեծ հարցին բանալին:

Անգղիական առածը կ'ըսէ՝ «Ծանր. բայց հաստատ»: Այո՛, ծանր, բայց հաստատ քայլերով պէտք է ընթանանք, որպէսզի Հայ ցեղի մնացորդն ալ չի կոտորենք անխորհուրդ և անտակաւ գործելակերպով:

Ներկայ ահռելի պատերազմը սկսելուց, գիտնե՞ք թե անտոնանան անհամար հորդաներն առաջ առաջ փոքրիկ, բայց ուժեղ Բելճիքայի վրայ ինկան, Բելճիքա արիաբար դիմադրեց, վասն զի ուժեղ էր, վասն զի իր զինադրոշը կր կազմէ այս նշանաբանը. «L'union fait la force» (Միութիւնը կը կազմէ զօրութիւնը): Եւ արդարև իր մի քանի ամսուան դիմադրութիւնը միջոց տուաւ դաշնակիցներին, որ իրենց բանակները կազմակերպէին:

Եւ դեռ անցեալ օր Գերմանիոյ նախարարապետը վստահօրէն կը յայտարարէր թէ Գերմանիա չ'պիտի յաղթուի, որովհետև ժողովուրդը միաբան է. կ'ըսէր]:

Տեսանք և ահագին մեծ պետութիւնը, վիթխարի Ռուսաստանի այս օրուան խղճալի դրութիւնը իր անմիաբանութեան հետևանօք, թշուառական Լէնինի մը զառանցանքներու զոհ երթալով, որ այժմ բալարովին անպատեհ էր, քանի որ թշնամին դուռն էր հասեր:

Նոյնպէս տեսանք ամենուրեք հալածուած, չարչարուած Իսրայէլի ցեղը, որ այսօր իր ազատութեան խանձարուրը կը պատրաստէ Պաղէստինի մէջ: Վասն զի Հրէից ամենագօր նշանաբանն է՝ «Բոլոր Իսրայէլացիք համերաշխ են»:

Հայ ժողովուրդն ալ պիտի փրկուի անշուշտ, եթէ իր որդիքն պոռոտ և օղային նշանաբաններէ ձեռք քաշելով հրաժարին միանգամայն ճոճիմ անձնականութիւններէ և ինքնամփոփմամբ մեր վերքերը բուժեն և իրենք ալ բուժուին:

Մեր հայասէր բարեկամ լորդ Բրայս ըսած է որ «Հայ ցեղը ոսկոր ունի, և ոսկորները ծած ունին»: Այս մեր անպարագրելի, աներևակայելի աղէտն ալ պիտի անցնի եթէ ըսեն թէ՝ «Բոլոր հայերն ալ համերաշխ են»: Առասիկ մեր վրէժխնդրութեան բանալին:

Թէ այս ըսպէիս հայ ժողովուրդը ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի, առասիկ երկու բառով բացատրեն:

Ազգութեան նար անպարագրելի, անբացատրելի փոթորկի մը հանդիպեցաւ: Փոթորիկը նար տարաւ նետեց խարայկների վրայ, կիսակործան վիճակի մէջ, թափուր ամեն պիտայքէ, և բնականաբար սմա յայտնեցին սով, հիւանդութիւն, տառապանք և տուայտանք:

Բայց այժմ վա՛ որ նախախնամութեան և օրհնութի՛ւն ամեն անոնց, որք նաւարկելայնէրէ մնացորդ բեկորներուն համար օգնութեան հասան ըստ կարեաց՝ ներսէն և դրսէն, և արդ Ազատութեան արշալոյսը կը ծագի Արարատի բարձունքէն:

Հիմա ժամանակը չէ մտածելու երջանիկ ապրելու եղանակը, այլ ժամանակ է մտածելու թէ ի՞նչպէս պիտի կարենանք մեր գոյութիւնը պահպանել. նախ՝ մեր գոյութիւնը պահենք և յետոյ երջանիկ ապրելու

միջոցները խորհինք: Այս պարագային ամեն կուսակցութիւն պէտք է լռէ, և ազգային ընդհանուր Հայրենիքի բարօրութիւնը պէտք է խօսի:

Հայաստան ըստ երևոյթին ազատեցաւ, բայց տեսնենք թէ իրապէս և հանգամանօրէն ազատեցա՞ւ անիկա: Հայաստան շրջապատուած է զանազան նախանձոտ և վնասակար տարրերէ, ինչպէս՝ Կրաստան, Լազիստան. Քիւրդիստան և Տաճկաստան: Վերջին ատեններս քրդական խլրտում և շարժում մը կը նշմարուի, և շատ հաւանական է, որ դրսէն քաջակերութիւն գտած լինի, մաքիալէլեան սկզբունքի համաձայն՝ Բաժանեա՛ զի տիրեցես: Պետքիսանների վաղուց ի վեր փայփայած խլրտումն է այդ՝ քրդական անկախութեան գաղափարը: Եւ յետոյ միամիտ չի լինենք կարծելու թէ Տաճկաստան ի սպառ կործանեցաւ: Տասնևհինգերորդ դարու սկիզբը՝ 1402 թուին, Թիմուրլենկ արշաւեց ի Թուրքիա, և Անկօրայի դաշտերում օսմանեան Մուլթան Երլոզորն Բայազիտ չարաւար պարտուեցաւ և զերեվարեցաւ, այնպէս որ տասնևմէկ տարի Մահիկը բոլորովին խաւարեցաւ, բայց յետոյ վերստին զօրանալով Երուսալայի տարսափ ազդեց: Նոյնպէս դուր գիտէք որ Բալքանեան վերջին պատերազմին պարտուած և յեա քաշուած ըլլալով հանդերձ՝ Գերմանիոյ օգնութեամբ վերստին զօրացաւ, ահագին Ռուսաց կայսրութիւնն զբաղեցուց և պատերազմի երկարելուն և պահ մը սևտոնների յաջողութեան նպաստեց:

Ո՛չ, Տաճկաստան ի սպառ չի կործանեցաւ, բայց Ալլիոնի կառավարութիւնը այս կամ այն նկատումներով պիտի պահէ զայն, թէպէտ խորդացեալ և կորդացեալ վիճակի մէջ, բայց այսուհանդերձ միշտ զօրաւոր ախալեան մը մեզի հանդէպ կարող է լինել:

Մենք միշտ մեզ թշնամիներ պիտի ունենանք, որք անբուն և միշտ արթուն պիտի տրնին գմեզ հանգիստ չի բողկու: Ուրեմն մենք իբրև մի մարմին ամփոփուելու և արտաքուստ ուժեղ անդի մը ձեռք ձգելու աշխատելու ենք, որ թէ յաչաղկոս, նախանձոտ մեր թշնամիները վանենք և թէ՛ իբրև ժրագան մեղու՛ ներքնապէս մեր զարգացմամբ և յառաջդիմութեամբ զբաղուինք, որպէսզի դաշնակից պետութեանց և մանաւանդ մեր պաշտպան ասպետ Ամերիկայի ցոյց տանք թէ Հայր՝ ընդ հուր, ընդ չուր և ընդ սուր անցնել յետոյ, արժանի է իրենց համարման և արեգակին ներքև իբրև ձեռքազատ և զարգացեալ մի ազգ իր տեղը բռնել, իր տաղանդէն և հանձնարէն բովանդակ աշխարհի բարօրութեան սեղանին վրայ իր բաժինը բերելու:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք 3
Երիտասարդ թուրքիա 7
Հայոց դերը թուրքիոյ մէջ. 19



**ԽԱՉԻԿ ՍԱՐԱՋԵԱՆ
ՀԱՅՈՑ ԳԵՐԸ ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՋ**

Հրատարակութեան է. ներկայացրել
Երևանի պետական համալսարանի
Հայագիտական կենտրոնը

Համակարգչային շարուածքը Լ. Բարախանեանի
Էջաղումը և ձևաւորումը Գ. Հնձացեանի



«Բուրվառ» մատենաշարով լոյս է տեսել

Սէյան, Նշմարներ, Կազմեցին Գ. Մադոյեան,
Ա. Խուղազերդեան, Երևան, 1999թ.